Այբ
կրթական
հիմնադրամ

«Այբ» կրթական հիմնադրամ
Կորյունի փող. 19ա, 9-րդ հարկ
Երևան 0009, Հայաստան

+374 10 543 707
+374 10 546 498
+374 77 010 863

www.ayb.am
www.foundation.ayb.am

ArPR HOLDING
Designed by
ArPR Holding
Yerevan, 2018

2017 թ. տարեկան հաշվետվություն

Այբ
կրթական
հիմնադրամ

2017
տարեկան հաշվետվություն

Այբ
կրթական
հիմնադրամ

2017
տարեկան հաշվետվություն

Բովանդակություն

Առաջաբան

«Այբ»-ը՝ գաղափար 6

«Այբ» ակումբի մասին
Մենտորության ծրագիր
Շրջանավարտների ակումբ
«Այբ» ակումբը՝ 1 տարում

«Այբ»-ը՝ գործ 16

«Այբ»-ի կարևոր իրադարձությունները 2006-2017 թթ.
«Քան» ակադեմիայի հայաստանյան գրասենյակ
Հայաստանի տեխնոլոգիական համալսարան
Հաջողության բանաձև
Բարի ընթրիք
Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան
Ազգային երգ ու պարի ակադեմիա

ԿԳԱԾ 32

ԿԳԱԾ-ի գործունեությունը
ԿԳԱԾ-ը՝ թվերով

«Այբ» դպրոց 40

«Այբ» դպրոցի գործունեությունը
«Այբ» դպրոցը՝ թվերով



48 Մրցույթներ

Մրցույթների գործունեությունը
Մրցույթները՝ թվերով

54 Դիլիջանի կենտրոնական դպրոց

Դիլիջանի կենտրոնական դպրոցի գործունեությունը
Դիլիջանի կենտրոնական դպրոցը՝ թվերով

62 Ֆինանսական արդյունքներ

Դրամի ներհոսք 2017 թ.
Դրամի արտահոսք 2017 թ.
Դրամական ելքերի ծավալներ 2017 թ.
Դրամական ելքերի ծավալ՝ ըստ տարիների
«Այբ» կրթական հիմնադրամ և «Այբ» համակարգի դպրոցներ
Անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացություն

68 Տարին՝ ակնթարթում

86 «Այբ»-ի բարերարներ

Սիրելի՛ ընթերցող,

Կրթության ոլորտն աշխարհում համարվում է ամենաբարդ ու բազմաբովանդակ ոլորտներից մեկը: Այն կանխորոշում է ապագայի զարգացումները, ոլորտ է, որը կարող է նախագծել մեր վաղվա օրը: Շատ կարևոր է, թե ում ձեռքում կլինի վաղվա կառուցման գործիքը և ինչ նպատակով այդ գործիքը կկիրառվի: Երիտասարդ սերնդի կերտումը թե՛ հնարավորություններով, թե՛ մարտահրավերներով լի 21-րդ դարի առանցքային հարցերից է:

Նոր սերնդի կրթությունն այս պատճառով պահանջում է նոր մոտեցում: Եվ որքան վաղ սկսվի այդ ճանապարհը, այնքան ավելի հաղթանակած կլինի սերունդը, որն այսօր արդեն ապրում է իրականի ու վիրտուալի եզրագծում:

Սոնա Կոշեցյան
«Այբ» կրթական հիմնադրամի գործադիր տնօրեն

2006-ին, երբ մենք սկսում էինք «Այբ»-ը, արդեն գիտակցել էինք կրթական նոր իրողության անհրաժեշտությունը, այնպիսի իրողության կարիքը, որը կհամադրեր հայկական ինքնության մաքրամաքուր գիտակցումը ժամանակակից գերարագ աշխարհի պատկերացումների հետ, կձևավորեր պատասխանատու սերունդ, որն ամբողջ աշխարհում իր խոսքը կասեր՝ մրցունակ գիտելիքներով ու հմտություններով, հայրենիքին նվիրվածությունը կդարձներ կենսակերպ և ինքը կստանձներ իրենից հետո եկող սերունդներին կրթելու վեհանձն գործը: 12 տարի առաջ մենք պարարտ հողում ցանեցինք սերմեր, որոնք այսօր դարձել են իրողություն, անշրջելի բարեփոխումների ապացույց և ամբողջացել «Այբ»-ի գաղափարական հենքի շուրջ:

Այս ընթացքում մեր իրականացրած բոլոր նախագծերը ծառայել են նոր սերունդ կերտելուն: Դրանք, ասես Ռուբիկի խորանարդը, մեր հեռահար հետևողականի՝ մրցունակ, ժամանակից հայկական կրթության մեր հավատամքի բաղկացուցիչներն են, որոնք միավորվում են՝ ամբողջացնելով պատկերը: Մենք մշակել ենք կրթական գործիքներ, որոնք էապես բարեփոխել են ուսանելու և դասավանդելու մասին պատկերացումները: Եվ որքան էլ կատարյալ լինի գործիքը, մարդն է, որ շարժում է այն:

«Այբ» համայնքն այս տարիների ընթացքում ընդլայնվել է՝ ընդգրկելով նոր անդամների: «Այբ» ակումբի անդամները, բարերարները, թիմն ու «Այբ»-ի նախագծերում ներառված աշակերտներն ու ուսուցիչները մեր ոգեշնչման ամենակարևոր աղբյուրն են: Բոցավառ աչքերն ամեն երեխայի, որ մրցանակ է ստանում դպրոցական մրցույթում, երջանկության արցունքն ամեն ծնողի, որի երեխան աշխարհի լավագույն բուհն է ընդունվում, նոր թիմակից, որ բացահայտում է «Այբ»-ի գաղափարը, թե դպրոցի տնօրեն, որ կրթական նոր իրողությունն ուզում է հասցնել իր հեռավոր մարզը, ապացույցն են այն բանի, որ մեր 12-ամյա ճանապարհը եղել է բարձունքներ հաղթահարելու ճշմարիտ ուղի:

2017-ն այդ ուղու կարևոր հանգրվաններից է եղել: Եվ մենք ուրախ ենք, որ շարունակելու ենք ճանապարհը միասին՝ կերտելով Հայաստանի ապագան՝ կրթական նոր իրողությունն իրականություն դարձնելով, ամեն օր նոր էջ գրելով պատասխանատու, ինքնությանը հավատարիմ, 21-րդ դարի մարտահրավերներին դիմակայելու կարող, Հայաստանն ու աշխարհը բարեփոխող սերնդի մասին:

«Այբ»-ը՝
գաղափար

«Այբ»-ը գաղափար է: Եվ այդ գաղափարը տեսանելի ու շոշափելի է բոլոր գործերում, նախագծերում, որոնք իրականացնում է «Այբ» կրթական հիմնադրամն իր բարերարների, աշխատակիցների, աշակերտների ու շրջանավարտների միջոցով:

«Այբ»-ի գաղափարը 2006-ին կերտել ու դրա իրականացման համար իրենց ամեն օրը ներդրել են 8 նվիրյալներ: Եվ այնքան բոցավառ են եղել և համոզված իրենց երազանքի իրականացման մեջ, որ «Այբ» համայնքը բազմապատկվել է անգամներով:

«Այբ»-ի առաքելությունը

«Այբ» կրթական հիմնադրամը հայկական ինքնատիպ կրթական մոդելի կերտման առաջամարտիկն է: Մենք հավատում ենք, որ հայկական գիտական-կրթական ժառանգության և ժամանակակից միջազգային լավագույն փորձի, ինչպես նաև ազգային ինքնության համադրությամբ հնարավոր է ձևավորել պատասխանատու քաղաքացիներ, ովքեր իրենք են ստեղծում իրենց և հայրենիքի, աշխարհասփյուռ հայության ապագան: Մենք համոզված ենք, որ կրթության լավագույն մոդելները պետք է հասանելի լինեն բոլորին՝ թե՛ որպես հանրակրթություն, թե՛ որպես արտադպրոցական կրթություն: Կրթությունը, մեր համոզմամբ, սկսվում է նախադպրոցական հասակից և ձգվում հարատև:

«Այբ»-ը սկսվել է «Այբ» ակումբից: «Այբ» ակումբի առաքելությունն այն մարդկանց միավորումն է, ովքեր գիտակցում են կրթության առաջնային դերը Հայաստանի վերափոխման գործում և ձգտում ստեղծելու որակյալ, բազմաբևեռ, օրինակելի կրթական համակարգ մեր երկրում: «Այբ» ակումբի անդամները մեր ընդհանուր գաղափարի իրականացմանը նպաստում են ժամանակի և ֆինանսական միջոցների ներդրմամբ: Նրանք հանդես են գալիս «Այբ»-ի ղեկավար մարմիններում, ներգրավվում «Այբ»-ի մենտորության ծրագրում և սեփական օրինակով, խոսքով ու գործով հոգ տանում երիտասարդների մասին: Մենտորները սաներին հաղորդակից են դարձնում իրենց սեփական փորձին, ձեռքբերումներին, գիտելիքներին՝ օգնելով առաջին քայլերը կատարել կարիերայի կառուցման ու կյանքում կայացման գործում: Կարևոր է նաև այն, որ ակումբի անդամները տարեկան անդամավճարների միջոցով ապահովում են «Այբ» կրթական հիմնադրամի ֆինանսական կայունությունն ու կենսագործունեությունը և նպաստում «Այբ»-ի ծրագրերի իրականացմանն ու առաջխաղացմանը:

«Այբ» ակումբն ամեն տարի համալրվում է նոր անդամներով: Այս տարի մենք մեծ ուրախությամբ դիմավորեցինք՝

- Արթուր Ալավերդյանին, գործարար և «Պրոֆխոլոդ» ընկերության սեփականատեր (Մոսկվա, Ռուսաստան),
- Արթուր Թովմասյանին, «Ինթերնեյշնըլ ֆուդ թեքնոլոջիզ» (International Food Technologies) ընկերության հիմնադիր և նախագահ (Լոնդոն, Մեծ Բրիտանիա),
- Արթուր Ջանիբեկյանին, «Քոմեդի Քլաբ Փրոդաքն»-ի (Comedy Club Production) հիմնադիր (Մոսկվա, Ռուսաստան),
- Արսեն Ղազարյանին, «Ապավեն» ընկերության գլխավոր տնօրեն, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ (Երևան, Հայաստան):

2017-ին տեղի են ունեցել «Այբ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի, «Այբ» դպրոցի հոգաբարձուների խորհրդի և «Այբ» ակումբի վարչության ընտրությունները և նոր կազմի ձևավորումը:

«Այբ» ակումբի վարչության նոր կազմը հետևյալն է.

- Սարգիս Բաղալյան (նախագահ),
- Արտաշես Շիրիկյան,
- Լևոն Ֆռնջիբաշյան,
- Սամվել Դովլաթյան,
- Սուրեն Հարությունյան:

«Այբ» դպրոցի հոգաբարձուների խորհրդի նոր կազմը հետևյալն է.

- Տ. Մեսրոպ քհն. Արամյան (նախագահ),
- Անահիտ Ադամյան,
- Արթուր Ալավերդյան,
- Դավիթ Սահակյան,
- Լուսինե Գալաջյան,
- Սարգիս Բաղալյան,
- Վազգեն Յակուբյան:

«Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նոր կազմը հետևյալն է.

- Կարո Սարգսյան (նախագահ),
- Դավիթ Փախչանյան,
- Դավիթ Յան,
- Ռուբեն Հարությունյան,
- Լևոն Ղազարյան,
- Կարեն Մուսայելյան,
- Վարդան Բաբիկյան:

Տարվա մեջ 2 անգամ «Այբ» ակումբի անդամները հավաքվում են Հայաստանում, քննարկում կարևորագույն հարցեր, նախանշում հետագա զարգացման ուղեծիրը:

Այս տարվա հունիսի 23-25-ին և հոկտեմբերի 14-16-ին տեղի ունեցան ավանդական 3-օրյա միջոցառումները: Հունիսի միջոցառումների ժամանակ «Այբ» ակումբի անդամները, ովքեր Հայաստան էին ժամանել աշխարհի տարբեր երկրներից՝ ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Մեծ Բրիտանիայից և Կիպրոսից, քննարկեցին «Այբ»-ի ռազմավարությանն ու օպերացիոն կառավարմանն առնչվող հարցեր: Հունիսյան 3-օրյայի կիզակետում էին տարվա ամենասպասված և հուզիչ միջոցառումները՝ «Այբ» դպրոցի ավարտական հանդիսությունը և «Այբ»-ի մենտորության ծրագրի հանդիսավոր արարողությունը:

2010 թվականի հունիսի 25-ին «Այբ» ակումբի անդամները, բարերարներն ու ընկերները «Այբ» հիմնադրամի թիմի ու կամավորների հետ միասին հավաքվեցին դպրոցի հողի վրա՝ նշելու նոր նախագծի սկիզբը: 7 տարի առաջ նրանք թղթին էին հանձնել իրենց երազանքի դպրոցի մասին պատկերացումները: Գրում էին՝ հավատալով, որ «Այբ»-ի գաղափարը կենսունակ է, իսկ իրենց երազանքներն՝ իրականանալի: Նրանց նամակներն այս տարիներին գաղտնիության կնիք-մակագրով պահվում էին «Այբ» հիմնադրամի գրասենյակում:

7 տարի անց՝ 2017 թվականի հոկտեմբերի 15-ին՝ հոկտեմբերի 3-օրյայի ընթացքում, հեղինակներից շատերը հավաքվեցին նույն տեղում՝ պաշտոնապես բացելու ծրարները, ընթերցելու իրենց շարադրած երազանքները, վերապրելու անցյալի հիշողությունները և համեմատելու դրանք այսօրվա «Այբ» դպրոցի հետ:

Մենտորության ծրագիր

«Այբ»-ի մենտորության ծրագիրն «Այբ» ակումբի գործունեության հիմնաքարերից մեկն է: Ծրագրի առաքելությունն է՝ կերտել ուսյալ և առաքինի սերունդ, ստեղծել սերունդների փոխօգնության ամուր շղթա, աջակցել մենտորներին՝ «Այբ» ակումբի անդամներին, որպեսզի սեփական օրինակով, խոսքով և գործով փոխանցեն արժեքներ գալիք սերունդներին՝ նպաստելով նրանց կայացմանն ու զարգացմանը: «Այբ»-ի մենտորության ծրագրի սաներ դառնում են «Այբ» դպրոցի բոլոր շրջանավարտները՝ իրենց կյանքի այս շրջադարձային փուլում (մինչև 25 տարեկան) անցնելով «Այբ» ակումբի անդամների հովանու ներքո:

Մենտորության ծրագրի շրջանակում 2017-ին տեղի ունեցան մի շարք միջոցառումներ և հանդիպումներ՝ մասնավորապես Արտակ Հովհաննիսյանի, Սուրեն Հարությունյանի, Արթուր Ջանիբեկյանի, Արսեն Գալստյանի և Սարգիս Բաղալյանի հետ: Դրանց ընթացքում սաներն ու մենտորները քննարկում էին կրթությանը, ապագային և ժամանակակից աշխարհի մարտահրավերներին դիմակայելու հեռանկարները: Շատ կարևոր է, որ մենտորության ծրագիրը ներգրավում է նաև նրանց, ովքեր դեռ դպրոցական են: Մենտորության ծրագրի շրջանակում ավագ ընկերները սաների հաջորդ սերնդին փոխանցում են իրենց գիտելիքն ու փորձը, պատմում իրենց ճանապարհի մասին: Կարևորելով նաև ծնողների ներգրավվածությունը և նրանց հետ մենտորության ծրագրի շուրջ քննարկումները՝ հանդիպումներ էին կազմակերպվել նաև նրանց հետ:

Կարևորելով սերունդների միջև կապը և փորձի փոխանակման անհրաժեշտությունը՝ շրջանավարտները նախաձեռնեցին մի շարք հանդիպումներ, որոնցում շրջանավարտներն իրենց փորձն էին ներկայացնում դպրոցի աշակերտներին:

Իսկ սաների նոր սերունդը հունիսի 24-ին՝ «Այբ»-ի ավարտական միջոցառման ընթացքում, միացավ «Այբ»-ի մենտորության ծրագրին՝ կախազարդերը ստանալու ավանդական արարողությամբ: Նրանք նոր կյանք մտան որպես «Այբ»-ի շրջանավարտ՝ համոզմունքով, որ շարունակելու են «Այբ» ակումբի, բարերարների համայնքի և իրենցից առաջ շրջանավարտ դարձած երիտասարդների ուղին՝ կրթության միջոցով կառուցելու ապագա Հայաստանը: Միջոցառումների շարքը համալրեց մենտորության կոնֆերանսը՝ «Հայաստանի ներկան և ապագան. կրթություն, գիտություն, բիզնես» խորագրով:

«Այբ»-ի շրջանավարտների ակումբ

2017 թ. մարտից «Այբ»-ի շրջանավարտների ակումբը վերսկսեց ակտիվ գործունեությունը: Մայիսին իրենց գործունեությունը շրջանավարտները որոշեցին սկսել ընկերական մենտորության համակարգի ձևավորմանը նպաստող քայլերով: «Այբ» դպրոցում հավաքվեցին «Այբ»-ի բոլոր չորս տարիների շրջանավարտները և 8-ից 12-րդ դասարանների աշակերտները՝ մասնակցելու «Այբ»-ի շրջանավարտների ակումբի ամենաընկերական նախաձեռնություններից մեկին՝ «Այբֆեստ» միջոցառմանը, որի նպատակն աշակերտների և շրջանավարտների միջև կապի ամրապնդումն է:

Շրջանավարտներն ամեն կերպ աջակցում են իրենց դպրոցին: Շրջանավարտների ակումբը դպրոցի և հիմնադրամի թիմի հետ համատեղ կազմակերպեց «Այբ»-ի ամանորյա բարեգործական ցուցահանդես-տոնավաճառը, և դրա ընթացքում հավաքված 1.493.490 ՀՀ դրամն ամբողջությամբ հատկացվեց դպրոցի Գ մասնաշենքի անհատական պահարանների ձեռքբերմանը:

Դասավանդման թիմ

Ուսումնական տարվա սկզբից շրջանավարտների ակումբը նաև ակտիվ համագործակցություն սկսեց դպրոցի ուսուցիչների հետ՝ ձևավորելով դասավանդման թիմ և ներգրավվելով կրթական գործընթացներում: Թիմում ներգրավված են շրջանավարտներ, ովքեր հետաքրքրված են դասավանդման փորձով, ցանկանում են փորձել իրենց ուժերն այդ ասպարեզում և ձեռք բերել նոր գիտելիքներ ու հմտություններ: 2017-ին «Այբ» դպրոցի շուրջ 18 շրջանավարտ համագործակցել է դպրոցի 14 ուսուցչի հետ՝ աջակցելով 7 առարկաների դասավանդման հարցում:

Մենտորության ծրագիրը՝ թվերով

2017 թ.

- **36 շրջանավարտ մուտք գործեց ծրագիր՝ բաշխման արդյունքում ձեռք բերելով մենտորներ:**

12.2017 թ.

Դեկտեմբերի դրությամբ ծրագրի մասնակից են՝

- **44 մենտոր,**
- **228 սան:**

«Այբ» ակումբը՝ 1 տարում

«Այբ» ակումբը՝ գործում

4 նոր անդամ

- Արթուր Ալավերդյան
- Արթուր Թովմասյան
- Արթուր Ջանիբեկյան
- Արսեն Ղազարյան

Կառավարման մարմինների ձևավորում

- Մայիս-հունիս. հաստատվեց «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նոր կազմը:
- Հունիս-օգոստոս. ձևավորվեց «Այբ» դպրոցի հոգաբարձուների խորհրդի նոր կազմը:
- Դեկտեմբերին ընտրվեց «Այբ» ակումբի վարչության նոր կազմը:

«Այբ» ակումբի եռօրյա միջոցառումներ՝ Սրբոց Թարգմանչաց տոներ

- Հունիսի 23-25. աշխատանքային հանդիպումներ, ավարտական հանդիսություն, մենտորության արարողություն և կոնֆերանս
- Հոկտեմբերի 14-16. աշխատանքային նիստեր, Գ մասնաշենքի բացում, ընտանեկան միջոցառումներ, մենտորների հավաք և հանդիպում շրջանավարտների ակումբի հետ

Մենտորության ծրագիր

Ծրագրի մասնակիցներ

- 2013-ից 2017-ը՝ 44 մենտոր և 228 սան
- 36 նոր սան միացավ ծրագրին

Տարվա առանցքային միջոցառումներ

- Հունիսի 24. մենտորության ծրագրի հանդիսավոր արարողություն, 36 սաների առաջին հանդիպում և ծանոթություն մենտորների հետ
- Հունիսի 25. մենտորության կոնֆերանս՝ «Հայաստանի ներկան և ապագան. կրթություն, գիտություն, բիզնես» խորագրով

Վարպետության դասեր և հանդիպումներ

- Հունվար. շրջանավարտների և աշակերտների հանդիպում-քննարկում՝ «Մասնագիտության և համալսարանի ընտրություն» թեմայով
- Մարտ. «Վաղվա մասնագիտությունները»՝ Արտակ Հովհաննիսյանի վարպետության դաս
- Մայիս. Սուրեն Հարությունյանի գործնական դասեր՝ «Հաղորդակցության հմտություններ» թեմայով
- Մայիս. «Հեռուստատեսության ու մեդիա բիզնեսի արդի միտումներ»՝ Արթուր Ջանիբեկյանի վարպետության դաս
- Հոկտեմբեր. «Բժշկական ոլորտի բիզնես հնարավորությունները» թեմայով հանդիպում-քննարկում Արսեն Գալստյանի և Սարգիս Բադալյանի հետ

«Այբ»-ի շրջանավարտների ակումբ

Համայնքային միջոցառումներ

- Մայիս. «Այբֆեստին»՝ ամենաընկերական միջոցառմանը, դպրոցում հավաքվեցին «Այբ»-ի բոլոր չորս տարիների շրջանավարտները և 8-ից 12-րդ դասարանների աշակերտները:
- Դեկտեմբեր. «Այբ»-ի ամանորյա բարեգործական ցուցահանդես-տոնավաճառ. շրջանավարտների ակումբի և դպրոցի ու հիմնադրամի թիմի համատեղ կազմակերպած բարեգործական միջոցառում, որի ընթացքում հավաքվեց 1.493.490 ՀՀ դրամ և ամբողջովին ուղղվեց դպրոցի Գ մասնաշենքի անհատական պահարանների ձեռքբերմանը:

Հետաքրքիր նախագծեր

- Դասավանդման թիմ. «Այբ» դպրոցի շուրջ 18 շրջանավարտ համագործակցում է դպրոցի 14 ուսուցչի հետ՝ աջակցելով նրանց 7 տարբեր առարկաների դասավանդման գործընթացում:
- Քվեստեր. շրջանավարտները նախագծեցին և իրականացրին 4 քվեստ՝ իրենց հասակակից ու կրտսեր ընկերների համար:

Ընկերական հանդիպումներ

- Մարտ. Սան Դիեգոյի համալսարանից 2013-ի շրջանավարտ Լանա Անդրեսյանը զրուցեց աշակերտների հետ UX (user experience) դիզայնի թեմայով:
- Օգոստոս. շրջանավարտների ակումբը հանդիպեց նոր ընդունված աշակերտների հետ՝ ողջունելով նրանց մուտքն այբական երիտասարդության համայնք:
- Դեկտեմբեր. շրջանավարտների ակումբի ներկայացուցիչները հյուր գնացին դպրոցի՝ «Վահե Կարապետյան» կենտրոնում բնակվող աշակերտներին:

«Այբ»-ը՝ գործ

2006 - 2017 թթ.
«Այբ»-ի կարևոր իրադարձությունները

2006 թ.

02.2006

- **Հիմնադրվեց «Այբ» ակումբը:**

  2017 թ. դեկտեմբերի դրությամբ՝ «Այբ» ակումբը միավորում է աշխարհի տարբեր անկյուններից 44 անդամի, ովքեր մշտապես աջակցում են «Այբ»-ի ծրագրերին և գործունեությանը:

12.2006

- **Հիմնվեց «Այբ» կրթական հիմնադրամը:**
- **Մեկնարկեց «Այբ»-ի առաջին ծրագիրը՝ «Առարկայական խորացված դասընթացները»:**

  Այս ծրագրի շրջանակում փորձարկվեցին «Այբ»-ի կրթական մեթոդաբանությունները, և դրվեցին «Արարատյան բակալավրիատ» կրթական նոր ծրագրի հիմքերը:

2007 թ.

05.2007

- **«Այբ»-ը Երևանի ֆիզմաթ դպրոցում հիմնեց առաջին արդիական ուսումնական լաբորատորիան՝ ֆիզիկայի «ԱյբԼաբ»-ը:**

  Այսօր Հայաստանի 4 մարզում գործում է 8 «ԱյբԼաբ»:

10.2007

- **«Այբ»-ը Հայաստանի 33 բուհի համար հասանելի դարձրեց Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի «OpenCourseWare» ծրագրի հազարավոր ուսումնական նյութեր:**

2008 թ.

05.2008

- **«Այբ»-ը Հայաստանում անցկացրեց «Կենգուրու» միջազգային մաթեմատիկական մրցույթը:**

  Այս իրադարձությամբ սկիզբ դրվեց «Այբ»-ի գործունեության կարևոր ուղղության՝ միջազգային դպրոցական մրցույթների ներկայացմանը Հայաստանում ու Արցախում և ապա նաև տեղական նմանատիպ զանգվածային մրցույթների ստեղծմանը: Այսօր «Այբ»-ն անցկացնում է հինգ միջազգային ու տեղական դպրոցական մրցույթներ:

06.2008

- **«Այբ»-ը ՀՀ նախագահին և վարչապետին ներկայացրեց «Այբ կրթական հանգույց» ծրագիրը:**

2009 թ.

08.2009

- **«Այբ»-ը 16 հայ ուսանողի շնորհեց կրթաթոշակներ:**

  Այսօր 35 ուսանող ՀՀ-ից և սփյուռքից ուսանում կամ ուսանել է աշխարհի լավագույն բուհերում՝ շնորհիվ «Այբ»-ի կրթության մեկենասության համակարգի:

- **Մեկնարկեց «Այբ»-ի կազմակերպած վարպետության դասերի շարքը ուսուցիչների համար:**

  Այս ծրագիրը հետագայում զարգացում գտավ այլ ձևաչափերով անվճար վարպետության դասերի տեսքով՝ զանազան լսարանների համար:

2010 թ.

01.2010

- **ՀՀ կառավարությունը տարվա իր առաջին նիստին որոշում կայացրեց «Այբ» կրթական հիմնադրամին հատկացնել Երևանում Թբիլիսյան խճուղուն հարող 6,5 հա հողատարածք՝**

  «Այբ կրթական հանգույց» ծրագրի իրականացման համար:

08.2010

- **Աշխարհի լավագույն հրատարակչությունների ավելի քան 300 դասագիրք ու ձեռնարկ ընտրվեց և բերվեց Հայաստան:**

  Ձեռք բերվեցին դրանցից մի քանիսի հեղինակային իրավունքները՝ հայերեն թարգմանության և տպագրության համար:

10.2010

- **Հայաստանում առաջին անգամ անցկացվեց Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշարը՝ նախատեսված քիմիայի սիրահար աշակերտների համար:**

  Այն դարձավ «Այբ»-ի ստեղծած առաջին հայաստանյան մրցույթը դպրոցականների համար:

11.2010

- **Հայաստանում առաջին անգամ պաշտոնապես անցկացվեց «Ռուսական արջուկ» մրցույթը՝**

  երկրորդ միջազգային դպրոցական մրցույթը, որ «Այբ»-ը բերեց Հայաստան և Արցախ:

- **Մեկնարկեց «Այբ» ավագ դպրոցի շինարարությունը:**

2011 թ.

10.2011

- **Բացվեց «Այբ» ավագ դպրոցը՝ առաջին մասնաշենքում:**

2012 թ.

10.2012

- **Բացվեց «Այբ» ավագ դպրոցի երկրորդ մասնաշենքը:**

2013 թ.

07.2013

- **Կնքվեց համագործակցության պայմանագիր ՀՀ Կենտրոնական բանկի և «Այբ» կրթական հիմնադրամի միջև՝ Դիլիջան քաղաքում «Այբ»-ի դպրոց բացելու մասին:**

09.2013

- **Բացվեց «Այբ» տարրական դպրոցը:**
- **Սկսվեց Դիլիջանի կենտրոնական դպրոցի առաջին ուսումնական տարին՝ ժամանակավոր տարածքում:**

  Մեկնարկեց դպրոցի հիմնական շենքի շինարարությունը:

2014 թ.

01.2014

«Այբ» կրթական հիմնադրամը, համագործակցելով Քեմբրիջի համալսարանի և Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի հետ, ՀՀ ԿԳՆ հետ համատեղ սկսեց լայնածավալ, պետական մակարդակի կրթական նախաձեռնություն՝

Կրթության գերազանցության ազգային ծրագիրը (ԿԳԱԾ):

09.2014

- **Բացվեց «Այբ» միջին դպրոցը:**

11.2014

- **Առաջին անգամ Հայաստանում և Արցախում անցկացվեց «Մեղու» հայերենի մրցույթը՝** մայրենի լեզվի առաջին զանգվածային մրցույթը Հայաստանում՝ մշակված «Այբ» հիմնադրամի կողմից:

2015 թ.

03.2015

Քեմբրիջի համալսարանի «Քեմբրիջի միջազգային քննություններ» կենտրոնը «Այբ»-ի մշակած և ԿԳԱԾ-ի շրջանակում լրամշակված «Արարատյան բակալավրիատ» կրթական ծրագիրը համազոր ճանաչեց բրիտանական խորացված մակարդակներին (GCE A Levels):

09.2015

- **Բացվեց Դիլիջանի կենտրոնական դպրոցի նոր շենքը:**

10.2015

«Այբ» կրթական հիմնադրամը և «Կարին» ավանդական երգի-պարի խմբի հիմնադիր և գեղարվեստական ղեկավար, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Գագիկ Գինոսյանը հիմնադրեցին «Ազգային երգ ու պարի ակադեմիա» կրթամշակութային հիմնադրամը, որի առաքելությունն է ազգային արժեհամակարգ և ազգային ինքնագիտակցության բարձր մակարդակ ունեցող սերունդների դաստիարակությունը:

- **Երևանի և Դիլիջանի «Այբ» դպրոցներին կից բացվեց երկու ֆաբլաբ** (Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի նախագծած արհեստանոց-լաբորատորիա): Ծրագիրը հնարավոր դարձավ ՀՀ Կենտրոնական բանկի և ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության աջակցությամբ:

2016 թ.

05.2016

- **Անցկացվեցին Արարատյան բակալավրիատի առաջին միջազգային քննությունները** (հայերենով), որոնց մասնակցեց «Այբ» ավագ դպրոցի 65 աշակերտ:

07.2016

- **Առաջին անգամ Հայաստանում «Այբ» հիմնադրամը պաշտոնապես անցկացրեց աշխարհում ճանաչված Ռոբոտների համաշխարհային օլիմպիադայի ազգային փուլը,** որի հաղթող թիմը մեկնեց Հնդկաստան՝ ներկայացնելու Հայաստանը միջազգային փուլում:

08.2016

- Մեծ Բրիտանիայի ճանաչման և համեմատության ազգային գործակալությունը (UK NARIC) Արարատյան բակալավրիատը համազոր ճանաչեց բրիտանական խորացված մակարդակներին (GCE A Levels) և ամերիկյան Advanced Placement-ին (AP):

10.2016

- **«Այբ» դպրոցը և Գյոթեի ինստիտուտը ստորագրեցին համագործակցության հուշագիր,** որով «Այբ» դպրոցը դարձավ Գյոթեի ինստիտուտի գործընկեր դպրոց՝ «Դպրոցներ. ապագայի գործընկերներ» (PASCH) նախաձեռնության շրջանակում:

12.2016

- **ՀՀ կառավարությունը Արարատյան բակալավրիատը ճանաչեց որպես պետական հանրակրթական ծրագիր Հայաստանում, մեկնարկեց ծրագրին դպրոցների անդամակցության գործընթացը:** Արարատյան բակալավրիատը համազոր է եվրոպական որակավորումների շրջանակի հանրակրթական ծրագրերի չորրորդ բարձրագույն մակարդակին:

2017 թ. ձեռքբերումներ

- **Փոխգործակցություն՝** ՀՀ պաշտպանության նախարարության (Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի շրջանակում) և «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի (Արարատյան բակալավրիատի շրջանակում) հետ:

- **ՀՀ-ում և Արցախում «ազգային երգ ու պար» առարկան դասավանդող 200-ից ավելի վերապատրաստված ուսուցիչներ:**

- **ՀՀ բոլոր մարզերի և Արցախի 21 դպրոց ներառվեց ծրագրի թեկնածության փուլում, և ավելի քան 100 ուսուցիչ-մասնագետ մասնակցում է զարգացման և հավաստագրման ծրագրին:**

- **5 դպրոցական մրցույթ,**
  որոնցում ներգրավվեց ՀՀ և Արցախի 90.000-ից ավելի մասնակից:

- **Ներկայացրինք նոր կրթական նախաձեռնություն՝** Հայաստանի տեխնոլոգիական համալսարանը:

- **Հատուկ ընդունելություն միայն մարզերից դիմորդների մասնակցությամբ. 25 աշակերտ ստացավ ամբողջական ֆինանսական աջակցություն և Երևանում կեցության հնարավորություն:**

- **Բացվեց «Այբ» դպրոցի նոր՝ Գ մասնաշենքը:**

- **Մեկնարկեցին «Քան» ակադեմիայի հայաստանյան գրասենյակի աշխատանքը և «Բարի ընթրիք» նախագիծը: Վերսկսվեց «Հաջողության բանաձև» նախագիծը:**

- **Ակումբին միացավ ևս 4 նոր համախոհ ու գաղափարակից: «Այբ» ակումբի անդամների թիվը՝ 44:**

Կրթությունն անընդհատ գործընթաց է: Այն իրականություն դարձնելու համար անհրաժեշտ են գաղափարին նվիրում, աշխատանքում համառություն և իհարկե համոզվածություն ճանապարհիդ ճշմարտացիության մեջ: Մեր անցած ուղին՝ իր յուրաքանչյուր կանգառով, փաստում է, որ մեր ձգտումը՝ ձևավորել սովորելու գերազանցության մշակույթ և աջակցել հայկական կրթության զարգացմանը, իրականություն է դառնում ամենօրյա հետևողական աշխատանքով:

2017-ն իրադարձություններով ու նորություններով հագեցած տարի է եղել: Սկսենք նորություններից:

«Քան» ակադեմիայի հայաստանյան գրասենյակ

Հուլիսից «Այբ» կրթական հիմնադրամում ակտիվ երիտասարդական եռուզեռ սկսվեց. մեկնարկեցին «Քան» ակադեմիայի հայաստանյան գրասենյակի աշխատանքները, որտեղ ակտիվորեն ներգրավված են «Այբ» դպրոցի տարբեր տարիների շրջանավարտներ: Նախագիծն իրականացվում է «Ռենեսանս» ինտելեկտուալ և մշակութային հիմնադրամի ֆինանսավորմամբ:

Գործունեության առաջին տարում հայալեզու «Քան»-ը կենտրոնացել էր տարրական մաթեմատիկայի, թվաբանության, նախահանրահաշվի, հանրահաշվի և երկրաչափության վրա: Երիտասարդները դեկտեմբերի վերջի դրությամբ արդեն թարգմանել էին շուրջ 400 հոդված, 300 վարժություն և ուսուցողական նյութ և 620 տեսանյութ:

Սեպտեմբերին «Քան» ակադեմիայի հայաստանյան գրասենյակի թիմը մասնակցեց Թբիլիսիում կայացած «Քան» ակադեմիայի թարգմանիչների ամենամյա համաժողովին, որտեղ քննարկվեցին կրթական տեխնոլոգիաներին առնչվող հարցեր, իսկ առանցքային թեման «Քան» ակադեմիայի դերն էր ժամանակակից կրթական ոլորտում:

Ինչ է «Քան» ակադեմիան

«Քան» ակադեմիան էլեկտրոնային ռեսուրսների թարգմանությանն ու ստեղծմանն ուղղված նախագիծ է: Այն ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է 2006 թվականին և գործում է «Համաշխարհային մակարդակի անվճար կրթություն բոլորի համար, ամենուր» կարգախոսով: Իսկ դրա առաքելությունը կրթության որակը բարելավելն է և այն ամենուրեք ու ամենքին հասանելի դարձնելը:

Հայաստանի տեխնոլոգիական համալսարան

Տեխնոլոգիաների ակտիվ զարգացման դարաշրջանում անհնար է պատկերացնել տնտեսության զարգացումն առանց նոր տեխնոլոգիաների կիրառության, նաև գյուտերի: Դրանք խթանում են կրթության ոլորտի զարգացումը: Այս հարցերը «Այբ» դպրոցի հոգաբարձուների խորհրդի նախագահ Տ. Մեսրոպ քհն. Արամյանը խորհրդակցության ընթացքում ներկայացրեց ՀՀ նախագահին և կրթության ոլորտի պատասխանատուներին ու շահագրգիռ անձանց՝ առաջ քաշելով Հայաստանի տեխնոլոգիական համալսարանի հիմնման անհրաժեշտության հարցը: Համալսարանի հիմնական թիրախը կլինի բարձր տեխնոլոգիաների բեկումնային ուղղությունների զարգացումը: Հայաստանի և արտերկրի բուհերի ու գիտահետազոտական ինստիտուտների հետ համագործակցության շնորհիվ համալսարանի շրջանավարտները հնարավորություն կունենան ստանալու երկու դիպլոմ՝ տեխնոլոգիական համալսարանի և գործընկեր բուհի կողմից:

Տեխնոլոգիական համալսարանի հայեցակարգը նախագահի հանձնարարությամբ լրամշակվեց և ներկայացվեց կառավարությանը: Դեկտեմբերին ՀՀ կառավարությունը կայացրեց արձանագրային որոշում «Հայաստանի տեխնոլոգիական համալսարանի հիմնման հայեցակարգին հավանություն տալու մասին»:

«Հաջողության բանաձև» նախագծի վերսկսում

«Այբ» հիմնադրամն ինքնին հաջողության պատմությունների ամբողջություն է: Մեր բոլոր նախագծերը հավակնոտ են, հաճախ անիրականանալի թվացող: Սակայն մենք հաջողում ենք մեր ձեռնարկներում ու կուտակում «հավաքական» փորձառություն: Հենց այս փորձառությունը կիսելու ցանկությունն էլ պատճառ դարձավ, որ վերսկսվի «Երևան Փրոդաքշնզի» և «Այբ» կրթական հիմնադրամի համատեղ «Հաջողության բանաձև» նախագիծը: Այն հայտնի և հաջողակ մասնագետների ու գործարարների կողմից մատուցվող անվճար վարպետության դասերի շարք է, որի նպատակն է հասանելի դարձնել խոսնակների իրական պատմություններն ու անձնական փորձառությունը, ցույց տալ հաջողության բաղադրիչ մասերն ու գաղտնիքները և ընդհանրապես նպաստել հայ երիտասարդների ինքնակրթությանն ու մասնագիտական զարգացմանը:

2017-ին նախագծում ներկայացան «Այբ» ակումբի անդամներ, ինչպես նաև հայտնի գործարարներ և պահանջված այնպիսի խոսնակներ, ինչպիսին են Արթուր Ջանիբեկյանը, Արմեն Օրուջյանը, Ստեպան Սոլժենիցինը, Դավիթ Յանը, Վիգեն Սարգսյանը, Արթուր Մարտիրոսյանը, Հրաչիկ Աղաջանյանը և Արամ Մնացականովը:

Վերսկսված նախագծի շրջանակում կիրառվեց նոր ձևաչափ՝ մասնագիտական թեմայով փակ հանդիպում խոսնակների հետ՝ «Այբ»-ի զարգացման ֆոնդին արված նվիրատվությունների դիմաց:

«Բարի ընթրիք» նախագիծ

«Այբ»-ի համար չկան փոքր չափի նվիրատվություններ, քանի որ դրանք ուղղվում են մեծ գաղափարի իրականացմանը: Եվ մենք շատ երջանիկ ենք, որ, տարբեր նոր նախագծեր իրականացնելով, կարողանում ենք կրթության հնարավորություն պարգևել հայ երեխաներին: Այսպիսի մի նախագիծ է հոկտեմբերին մեկնարկած «Բարի ընթրիքը», որի շրջանակում անցկացված ինը հանդիպումների արդյունքում հավաքվեց և «Այբ» հիմնադրամի կրթաթոշակային ֆոնդին փոխանցվեց 2.696.615 ՀՀ դրամ: Նախաձեռնությունը մեծ ոգևորությամբ է ընդունվում թե՛ մեր հյուրերի (Դավիթ Յան, Վահան Քերոբյան, Հասմիկ Պապյան Նուռ, Ռալֆ Յիրիկյան, Արամ MP3, Արմեն Օրուջյան, Շուշանիկ Արևշատյան, Ժիրայր Ավանյան) և թե՛ հանրության կողմից:
Նախագիծն իրականացվում է վեց ռեստորանի հետ համագործակցությամբ:

Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան

Ինքնության հենքով կրթությունն անհնար է պատկերացնել առանց ռազմահայրենասիրական դաստիարակության: Մյուս կողմից՝ ռազմական կրթությունը նույնպես պետք է լինի մրցունակ, քանի որ դա է ապագա սպաների մարտունակության գրավականը:

Այս առաքելությամբ է «Այբ» կրթական հիմնադրամը համագործակցում ՀՀ պաշտպանության նախարարության Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի հետ: 2017-ին այս համագործակցության շրջանակում «Այբ» կրթական հիմնադրամը կազմակերպեց 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների 141 աշակերտի՝ «հայոց լեզու» և «մաթեմատիկա» առարկաների քննություններով ընդունելության գործընթացը: Նրանցից 80-ն ընդունվեց ռազմամարզական վարժարան՝ քննությունները հաջողությամբ հանձնելու և դրան հաջորդած հարցազրույցի արդյունքում:

Ունենալով ուսուցիչների վերապատրաստման գործընթաց կազմակերպելու փորձ՝ «Այբ» կրթական հիմնադրամն իրականացրեց նաև ուսուցիչների ընդունելության գործընթացը: Քննություններին մասնակցած 47 ուսուցիչները մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, հայոց լեզվի և գրականության, հայոց պատմության, աշխարհագրության, ռուսերենի, անգլերենի մասնագետներ են: Քննությունները հաջողությամբ հաղթահարած ուսուցիչներն այնուհետև մասնակցեցին հարցազրույցի, ինչի արդյունքում վարժարանի ուսուցչական կազմը համալրվեց 13 ուսուցչով:

«Այբ»-ի ներկայացուցիչները «Այբ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներ են և ակտիվորեն մասնակցում են հիմնադրամի կառավարման աշխատանքներին:

Ազգային երգ ու պարի ակադեմիա

«Կարին» ավանդական երգի-պարի խմբի հիմնադիր և գեղարվեստական ղեկավար Գագիկ Գինոսյանի և «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ստեղծված Ազգային երգ ու պարի ակադեմիայի շնորհիվ ազգային երգը բարձր է հնչում, իսկ պարի դոփյունները խրոխտ են ՀՀ ողջ տարածքում սփռված 222 և Արցախի Հանրապետության 16 դպրոցներում: Եվ որպեսզի ազգային երգ ու պար առարկան դասավանդվի Հայաստանի և Արցախի բոլոր դպրոցներում, պարբերաբար իրականացվում են վերապատրաստման դասընթացներ: Այսպես՝ Երևանում, Արմավիրում և Վայոց ձորում, այնուհետև նաև Արցախում տեղի ունեցած վերապատրաստումներից հետո (2 փուլով) ուսուցիչները հանձնեցին ամփոփիչ քննություն, և բարեհաջող արդյունքներ ցուցաբերած ուսուցիչները ստացան հավաստագիր, որը նրանց կտա հնարավորություն՝ առարկան մեկ տարի դպրոցում դասավանդելու՝ համաձայն ՀՀ ԿԳ նախարարի հրամանի:

«Ազգային երգ ու պարն» այսօր դասավանդվում է որպես պարտադիր առարկա: Վերապատրաստված 123 ուսուցիչներն առարկան արդեն դասավանդում են հանրակրթական դպրոցներում: Այն ուսուցանվում է 5-7-րդ դասարանցի 24.000 աշակերտի:

Այս տարի հայկական երգ ու պարը զարդարեց մի շարք միջոցառումներ՝ «Հայաստան – սփյուռք» համաժողովը, «Զարխափան ուրբաթ 13» միջոցառումը, «Այբ»-ի եռօրյա միջոցառումները, և անցկացվեցին մի շարք բաց դասեր:

Իսկ հայկական երգ ու պարը գիտական հիմքերի վրա դնելու նպատակով 2017-ին ստեղծվեց Ազգային երգ ու պարի ակադեմիայի գիտական կենտրոն, որի նպատակն ապահովելն է ԱԵՊԱ-ի բոլոր ուղղությունների անխափան աշխատանքն ու զարգացումը:

Տարվա կարևոր ձեռքբերումներից են նաև ազգային երգ ու պարի արխիվային տեսանյութերի և այլ նյութերի մշակման աշխատանքները: Այս շարունակական աշխատանքը թույլ կտա պահպանել մեր պապերից մեզ հասած ազգային ժառանգությունը:

«Այբ» կրթական հիմնադրամի մյուս նախագծերը ներկայացնում ենք հաջորդ բաժիններում:

Հարկավոր է մշտապես սովորել, քանի դեռ գեթ ինչ-որ բան անհայտ է:

Սենեկա Կրտսեր

foundation.ayb.am/hy/donate

Նվիրաբերի՛ր

2012 – 2017 թթ. 21.261.050 ԱՄՆ դոլար՝ Հայաստանում կրթական նախագծերի իրականացման համար

Միասին կարող ենք իրագործել ավելին:

Կրթության գերազանցության
ազգային ծրագիր

«2014 թ. հունվարն էր: Հայաստանից Քեմբրիջ եկավ հայկական պատվիրակությունը, որն ամենայն մանրամասնությամբ և վարակիչ խանդավառությամբ մեզ ներկայացրեց միջազգայնորեն ճանաչված որակավորում ունենալու իր տեսլականը, որը, հիրավի, հիացրեց մեզ: Հասկացանք, որ կարող ենք մեր ներդրումն ունենալ այդ տեսլականի իրագործման ճանապարհին: Հենց այդպես սկսվեց մեր համագործակցությունը «Այբ» կրթական հիմնադրամի հետ, և ես անչափ ուրախ եմ դրա համար»,–

հարցազրույցներից մեկում ասել է Քեմբրիջի համալսարանի Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի փոխտնօրեն **Դեն Բրեյը:**

Կրթության գերազանցության ազգային ծրագիրը (ԿԳԱԾ) մեկնարկել է 2014 թ.՝ Հայաստանում միջազգայնորեն մրցունակ հայալեզու հանրակրթական նոր որակ ներդնելու ու տարածելու, հասարակության մեջ ուսուցչի դերի կարևորությունը բարձրացնելու և Հայաստանի դպրոցական կրթության ողջ համակարգը կատարելագործելու նպատակով: Ծրագիրն իրականացվում և համաֆինանսավորվում է ՀՀ կառավարության՝ ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության, և «Այբ» կրթական հիմնադրամի կողմից՝ Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի և Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի հետ համագործացությամբ: «Այբ» կրթական հիմնադրամը համագործակցում է Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի հետ գնահատման և կրթակարգի մշակման շուրջ և ԼՀՔ Կրթության ինստիտուտի հետ՝ ԱԲ-ի ուսուցիչների և դպրոցների ղեկավար կազմի մասնագիտական զարգացման ծրագրի մշակման շուրջ:

ԿԳԱԾ-ի իրականացման գործիքը «Այբ» կրթական հիմնադրամի մշակած «Արարատյան բակալավրիատ» (ԱԲ) հայալեզու և միջազգայնորեն ճանաչված կրթական ծրագիրն է:

Ծրագրի մեկնարկից ընդամենը երեք տարի անց՝ 2017 թ., հայալեզու և միջազգայնորեն ճանաչելի կրթությունը հայ երեխաներին հասանելի դարձնելու ձգտումը թևակոխեց ավելի գործնական և շոշափելի փուլ. «Արարատյան բակալավրիատ» ծրագրի թեկնածության փուլում ներառվեց ավագ բաղադրիչ ունեցող 21 պետական դպրոց՝ 20-ը՝ ՀՀ մարզերում, 1-ը՝ Ստեփանակերտում: Այս դպրոցները, սկսած 2018 թ.-ից, կունենան հնարավորություն՝ հավաստագրվելու որպես ԱԲ-ի համակարգի դպրոց՝ ներդնելով ԱԲ-ի առարկայական ծրագրերը ինչպես մեկ դասարանում, այնպես էլ ամբողջ դպրոցում:

Թեկնածության փուլում դպրոցների ներգրավմանը զուգահեռ 2017 թ.-ի մարտին մեկնարկեց ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրի համամարզային և Արցախի առաջին՝ 2017-2018 թթ. շրջափուլը, իսկ դեկտեմբերին՝ երկրորդ՝ 2018-2019 թթ. շրջափուլը: Ծրագիրը, որը դեռևս 2015 թ.-ից փորձարկվում էր, շուրջ մեկ տարի տևողությամբ, միջազգային չափանիշներին համապատասխան նոր ու լայնածավալ ծրագիր է, որում այսօր ներգրավված է 105 մասնակից՝ ՀՀ մարզերից և Արցախից, և որն անվճար է մասնակիցների համար: Ծրագիրը մշակվել է «Այբ» կրթական հիմնադրամի կողմից՝ Լոնդոնի համալսարանական քոլեջի (ԼՀՔ) Կրթության ինստիտուտի հետ համագործակցությամբ՝ հիմք ընդունելով հայ ուսուցիչների կարիքները:

ԼՀՔ Կրթության ինստիտուտի հետ համագործակցությամբ այս տարի մեկնարկեց նաև ԱԲ-ի դպրոցների ղեկավար կազմի (տնօրենների և փոխտնօրենների) մասնագիտական զարգացման ծրագրի մշակումը: Հատկանշական է, որ ծրագրի մշակման ու տեղայնացման գործին ակտիվորեն մասնակցել են նաև Արարատյան բակալավրիատի թեկնածու դպրոցների տնօրենները:

ԱԲ-ի առանձնահատկություններից մեկը գնահատման ձևերն են՝ ձևավորող և ամփոփիչ: Ձևավորող գնահատումն իրականացվում է տնային առաջադրանքների, կուրսային աշխատանքների և դասարանային թեստերի համար: Յուրաքանչյուր աշակերտ իր ուսուցչի հետ միասին կազմում է թղթապանակ և ստանում բնութագրական արձագանք՝ ըստ թղթապանակում արտացոլված առաջընթացի, իսկ ընթացիկ թվանշանային գնահատում չի իրականացվում:

Թվանշանային՝ ամփոփիչ գնահատում իրականացվում է տարին երկու անգամ յուրաքանչյուր կիսամյակի ավարտին: ԱԲ-ի ամփոփիչ գնահատումը, որը ներառում է ավարտական քննությունների գնահատումը, իրականացվում է անկախ քննական մարմնի՝ Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնի կողմից (այն սերտորեն համագործակցում է Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի հետ): Քննական կենտրոնը ստեղծվել է 2015 թ. «Այբ» կրթական հիմնադրամի կողմից:

2017 թ.-ին ձևավորվեց «Արարատյան բակալավրիատ» ծրագրի շրջանավարտների երկրորդ սերունդը: Այս աշակերտները հանձնեցին ԱԲ-ի ավարտական առաջին քննությունները «հայոց լեզու և գրականություն» և «հայոց պատմություն» առարկաներից, ապա **հայերենով** հանձնեցին ԱԲ-ի՝ միջազգայնորեն ճանաչելի երկրորդ ավարտական և բուհական ընդունելության քննությունները չորս առարկայի համար՝ քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն և մաթեմատիկա*: Այս քննությունները մշակում, իրականացնում և ստուգում է ԱԲ-ի քննական կենտրոնը:

«Մեկ բան, որ հատկապես առանձնանում և տպավորիչ է դարձնում մեր համագործակցությունը, այն արագությունն է, որով Արարատյան բակալավրիատն առաջ է ընթանում: Դեռ երեք տարի էլ չի անցել այն օրից, երբ մենք սկսեցինք քննարկումները, իսկ այսօր արդեն ունենք բարձրորակ և միջազգայնորեն ճանաչված կրթական ծրագիր: Դեռ ավելին, մենք ունենք աշակերտներ, որոնք հանձնել են ԱԲ-ի քննությունները և ստացել ԱԲ-ի հավաստագիրը: Եվ այդ ամենը՝ անհավանականորեն կարճ ժամանակահատվածում»:

Դեն Բրեյ

*Այս առարկաներից առաջին ավարտական և բուհական ընդունելության քննություններն անցկացվել են 2016 թ.:

Այս չորս քննությունների արդյունքներով, որոնք համատեղ հավաստագրվում են ԱԲ-ի քննական կենտրոնի և Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի կողմից, աշակերտներն ունեն հնարավորություն՝ դիմելու և ընդունվելու ՀՀ պետական և հեղինակավոր օտարերկրյա բուհեր, որոնց թիվը 2017 թ.-ին համալրվեց ավելի քան 20 բուհով՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմելով 27 բուհ՝ Վիեննայի բժշկական համալսարան (Ավստրիա), Բրիստոլի համալսարան (Մեծ Բրիտանիա), Լիդսի համալսարան (Մեծ Բրիտանիա), Մանչեստերի համալսարան (Մեծ Բրիտանիա), «Կառավարման բարձրագույն ինստիտուտ» միջազգային բիզնես դպրոց (Ֆրանսիա), Ռոտերդամի Էրասմուս համալսարան (Նիդեռլանդներ), Ֆլորիդայի տեխնոլոգիական և գիտական համալսարան (ԱՄՆ), Հոնկոնգի տեխնոլոգիական և գիտական համալսարան (Հոնկոնգ), Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարան (ԱՄՆ) և այլն:

Տարին հագեցած էր իրադարձություններով: Մենք հյուրընկալեցինք հեղինակավոր կրթական հաստատությունների ներկայացուցիչների (Քեմբրիջի համալսարանի Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի գործադիր տնօրեն Մայքլ Օ'Սալիվանին, Մեծ Բրիտանիայի Վեստմինստերյան դպրոցի տնօրեն Փատրիկ Դերհամին), նաև ներկայացրինք Հայաստանն ու ԱԲ-ը միջազգային հարթակում՝ Մեծ Բրիտանիայի Էդինբուրգ քաղաքում անցկացվող Միջազգային դպրոցների խորհրդի տարեկան գիտաժողովին: Արարատյան բակալավրիատի շրջանակում և համագործակցության մի շարք ուղղություններով ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր «Այբ» կրթական հիմնադրամի և «Հայաստանի մանուկներ» (COAF) հիմնադրամի միջև:

«Հայաստանում ստեղծվել է մի որակավորում, որն այսօր համազոր է միջազգային որակավորումներին: Արդյո՞ք հայկական կրթությունը կհայտնվի աշխարհում հայտնի կրթական համակարգերի կողքին, թե ոչ, մեծապես կախված է նրանից, ինչ կատարվում է այստեղ՝ Հայաստանում, իսկ այստեղ բոլոր անհրաժեշտ պայմանները ստեղծված են, և ամեն ինչ հենց ձեր ձեռքերում է»:

Դեն Բրեյ



2017 թ.

31.12.2017 թ.

- ԱԲ-ի թեկնածության փուլում գտնվում է ՀՀ մարզերի և Ստեփանակերտի 21 պետական դպրոց:
- ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրում ներառված է ՀՀ մարզերի և Արցախի 105 ուսուցիչ--մասնագետ:
- Այս պահի դրությամբ հավաստագիր ստացել է «Այբ» դպրոցի 34 ուսուցիչ:
- ԱԲ-ի հավաստագիրն ընդունվել ու ճանաչել է 27 համալսարանի կողմից:

«Այբ» դպրոց

«Այբ» դպրոցը 1-12-րդ դասարանների համար նախատեսված կրթական հաստատություն է: Բացի սովորելուց՝ դպրոցի աշակերտները, սկսած տարրական դպրոցից, ներգրավվում են հասարակական աշխատանքներում, որոնք նպատակ ունեն պատասխանատու քաղաքացիներ ձևավորելու:

Ավագ դպրոցն աշխարհում դեռևս միակն է, որտեղ ուսուցումն իրականացվում է միջազգայնորեն ճանաչված «Արարատյան բակալավրիատ» հայալեզու ծրագրով: Դասավանդման առանցքային բաղկացուցիչներից է նախագծային ուսումնառությունը: Ավագ դպրոցը Հայաստանում կրթական միակ սոցիալական նախագիծն է, որտեղ աշակերտները ստանում են կրթաթոշակ՝ կախված ընտանիքի սոցիալական վիճակից:

«Այբ» դպրոցը բոլորովին նոր կրթական միջավայր է, որտեղ սաները հնարավորություն ունեն զարգացնելու ստեղծագործական մտածողությունը, դառնալու արարող և ներկայանալ՝ որպես 21-րդ դարի մարտահրավերներին պատրաստ քաղաքացիներ: Աշակերտների հայտնագործությունները, որոնք ուղղված են աշխարհի առաջ ծառացած խնդիրների լուծմանը, զարմացնում են գիտական աշխարհին:

Դպրոցի «Կանաչ քիմիա» թիմը Մոսկվայում կայացած «Նորարարության մեկնարկ» («Старт в инновации») համաժողովում ներկայացավ Երկիր մոլորակի հանդեպ հոգատարության դրսևորմամբ՝ «Այբպլաստ» նախագծով, և լավագույնը ճանաչվեց «Կենդանի համակարգեր» անվանակարգում: Աշակերտները կարտոֆիլից ստացել են օսլա և, օգտագործելով այն որպես բնական հումք, փորձել ստանալ բիոպլաստիկ: 11-րդ դասարանցի Աշխեն Արզումանյանի և 12-րդ դասարանցի Սվետա Մնացականյանի «Այբպլաստ» նախագիծը հաղթեց նաև «100 գաղափար Հայաստանի համար» համահայկական երիտասարդական մրցույթում՝ լավագույնը ճանաչվելով «Գյուղատնտեսական գիտություններ և բիոտեխնոլոգիաներ» անվանակարգում:

«Այբ» դպրոցի հաղթանակներն ու մրցանակները բազում են: Դա հնարավոր է աշակերտակենտրոն և տարբերակված ուսուցման, դասարանի զարգացման համալիր նախագծերի, դպրոցի ինքնակառավարման ժողովրդավարական մոդելների շնորհիվ: Այս ու այլ թեմաներ էին քննարկում 100-ից ավելի ուսուցիչներ՝ «Այբ» դպրոցից ու Դիլիջանի կենտրոնական դպրոցից՝ «Այբ»-ի ուսուցչական համաժողովին: Արդեն 3-րդ անգամ անցկացվող այս համայբական միջոցառման նպատակն էր ուսուցիչների փորձի փոխանակումը և մասնագիտական զարգացումը:

«Իմ խնդրանքն է՝ օգնել աշակերտներին մարդ դառնալու հարցում: Կարդալ, գրել, հաշվելը կարևոր են միայն, եթե դրանք օգնում են մեր երեխաներին որպես անհատ կայանալիս: Դպրոցները պետք է «արտադրեն» մարդկանց, ովքեր կարողանալու են աշխատել և տնտեսությանն օգուտ տալ»:

Լոնդոնի համալսարանական քոլեջի (ԼՀՔ) Կրթության ինստիտուտի ավագ մասնագետ, դոկտոր Յացեկ Բրանտ

«Այբ» դպրոցն իսկապես անհատների ձևավորման հնոց է, որտեղ յուրաքանչյուր սան կարողանում է բացահայտել իր ներուժը՝ դառնալու իր համայնքում փոփոխությունների շարժիչ ուժ:

Այսպես՝ արդեն երկրորդ տարին անընդմեջ «Այբ» դպրոցի ռոբոտաշինության խմբակը հաղթանակով է վերադառնում ԱՄՆ-ի Մարիոն քաղաքում անցկացվող հեղինակավոր «Ռոբոտիկայի ազգային մարտահրավեր» (National Robotics Challenge) մրցույթից: «Մարտական ռոբոտ» (Combat Robot) անվանակարգում թիմը բրոնզե մեդալ վաստակեց՝ ավելի քան 400 ռոբոտ ներկայացնող 1300-ից ավելի մասնակիցների հետ մրցելով:

«Մենք ստեղծել էինք ռոբոտ, որի առաջադրանքն էր ոչնչացնել հակառակորդին: Եվ մեր ռոբոտը հեշտությամբ էր կատարում իր առաքելությունն ու վնասազերծում մյուսներին»:

«Այբ»-ի ռոբոտաշինության խմբի անդամ Արեգ Կարապետյան

Նրա ընկերները՝ «Այբ» դպրոցի 2017 թ. շրջանավարտ Սիմոն Զոհրաբյանն ու ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Շանթ Սարգսյանը, այս տարի արժանացան ՀՀ նախագահի ամենամյա կրթական պարգևին՝ «Լավագույն աշակերտ SS ոլորտում» անվանակարգում:

Ռոբոտներ ստեղծելու կարողություններն Է՛լ ավելի արդյունավետ կարող են դառնալ հակառակորդին վնասազերծելիս, երբ դրանց միանում

են ազգային ռազմապարերը, մարմնակրթությունը և բանակման ձևաչափով ուսուցանվող տեսական և գործնական ՆԶՊ-ն: Հենց այս 4 ուղղություններով էին ներկայանում «Այբ» դպրոցի սաները ՀՀ ՊՆ կազմակերպած «Ազգ-բանակ» առաջին համաժողովի ընթացքում բացված ցուցահանդեսին:

«Հայրենասիրությունը միայն բանակում զենք բռնելը չէ: Կան տարբեր ոլորտներ, որոնք հենց դպրոցում են զարգանում և որոնց միջոցով է հայրենասիրական ոգին դրսևորվում: Օրինակ՝ ռազմապարերը, մարմնակրթությունը կամ ռոբոտաշինությունը»

դպրոցի՝ համայնքի զարգացման գծով փոխտնօրեն
Աննա Հակոբյան

Իսկ տարվա ամենակարևոր իրադարձությունը «Այբ» դպրոցի Գ մասնաշենքի բացումն էր:

180 աշակերտի համար նախատեսված, ժամանակակից կրթական տեխնոլոգիաներով, բազմաթիվ լաբորատորիաներով հագեցած, արվեստի ստուդիաներ, սպորտդահլիճ և 11 դասասենյակ ունեցող «Այբ» դպրոցի Գ մասնաշենքը՝ դրսի դեղին «աշտարակներով», ավելի շատ գիտահետազոտական գերժամանակակից լաբորատորիա է հիշեցնում:

«Մեր կրթության փիլիսոփայությունը խարսխված է ազատության և ստեղծարարության վրա: Մենք փորձել ենք դա արտացոլել մեր կրթական տարածքներում, քանի որ ուզում ենք, որ մեր ապագա սերունդը լինի ազատատենչ, ստեղծարար, նորարարությունների ձգտող և ճշմարտության հետևից գնացող: Եվ այս մասնաշենքը դրա արդյունքն է»,–

ասել է Տ. Մեսրոպ քհն. Արամյանը մասնաշենքի բացման արարողության իր խոսքում:

Այս գաղափարն է միավորել նաև «Այբ» համայնքի այն տասնյակ բարերարներին, որոնց առատաձեռն աջակցությամբ հնարավոր է դարձել մասնաշենքի կառուցումը:

«Մեր նպատակն է՝ ձևավորել դպրոցաշինության մշակույթ, որտեղ կձևավորվեն մարդկային լավագույն որակները, կզարգանան երեխաների երևակայությունը, ստեղծարար ներուժը, իսկ սովորելն ու դասավանդելը կլինեն ոգևորիչ և արդյունավետ»,–

նույն առիթով ասել է «Այբ» դպրոցի տնօրեն Արամ Փախչանյանը:

«Այբ»-ի Ա, Բ և Գ մասնաշենքերում և տարրական դպրոցում երեխաներն իսկապես զարգացնում են ստեղծագործ ու նորարարական մտածողություն: Եվ դրա ապացույցը դպրոցի սաների փոքրիկ հայտնագործություններն ու դրանց արդյունքում նվաճած հաղթանակներն են:

«Այբ» դպրոցը՝ թվերով
2017-2018 ուստարի

Որքան կրթաթոշակ է տրամադրվել աշակերտներին 2016-ին և 2017-ին

2016
- 129.743.000

2017
- 163.672.000

աճը
- 33.929.000

Ավագ դպրոցի 158 աշակերտների ավելի քան 70%-ը ստանում է ֆինանսական աջակցություն «Այբ» կրթական հիմնադրամի կրթաթոշակային ֆոնդից՝ ուսման վարձի մասնակի կամ ամբողջական փոխհատուցման համար:

Դասավանդում է 145 ուսուցիչ

31 ուսուցիչ
- վաստակավոր գործիչ
- սպորտի վարպետ
- գիտությունների դոկտոր
- գիտությունների թեկնածու

38 ուսուցիչ
- տասը և ավելի տարիների մանկավարժական փորձառությամբ

ընդհանուր 398 աշակերտ

«Այբ» ավագ դպրոցի տասներորդցիներից՝

35 աշակերտ
- ընդունվել է բաց ընդունելությամբ (այլ դպրոցներից)

22 աշակերտ
- ընդունվել է ներքին ընդունելությամբ («Այբ» միջին դպրոցից և Դիլիջանի կենտրոնական դպրոցից)

23 աշակերտ

մարզային հատուկ ընդունելությամբ
- Արմավիրից 4
- Կոտայքից 7
- Շիրակից 4
- Լոռուց 1
- Սյունիքից 1
- Գեղարքունիքից 3
- Տավուշից 3
- Արցախից 4

2017 թ. տարեկան հաշվետվություն

Աշակերտների բաշխվածությունը

ըստ երկրների

- Ռուսաստան
  - 20
- ԱՄՆ
  - 19
- Բուլղարիա
  - 1
- Իրան
  - 3
- Լիբանան
  - 1
- Իռլանդիա
  - 2
- Ավստրիա
  - 1
- Կանադա
  - 1
- Իսպանիա
  - 1

ըստ մարզերի

- Արմավիր
  - 4
- Կոտայք
  - 7
- Շիրակ
  - 4
- Լոռի
  - 1
- Սյունիք
  - 1
- Գեղարքունիք
  - 3
- Տավուշ
  - 3
- Արցախ
  - 4

Մարզային հատուկ ընդունելությունն անցած աշակերտները ստացել են ամբողջական կրթաթոշակ և Երևանում կեցության հնարավորություն:

Մրցույթներ

Արդեն 9 տարի Հայաստանում և 7 տարի Արցախում «Այբ» կրթական հիմնադրամն անցկացնում է դպրոցական տեղական և միջազգային զանգվածային մրցույթներ: Այս տարիների ընթացքում «Կենգուրու. մաթեմատիկան բոլորի համար», «Մեղու. հայերենը բոլորի համար», «Ռուսական արջուկ. լեզվաբանությունը բոլորի համար» մրցույթների, Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշարի և Ռոբոտների համաշխարհային օլիմպիադայի իրականացման, դրանց անցկացման և արդյունքների ստուգման նոր չափանիշներ ու չափորոշիչներ են սահմանվում: Մրցույթները համախմբում են աշակերտներին Հայաստանի բոլոր մարզերից և Արցախից, օգնում կրթական միջավայրում նոր նպատակներ սահմանելու և խնդիրներ լուծելու: Դրանք հնարավորություն են տալիս մտնելու արդար պայքարի մեջ և գիտելիքներով ու ազնիվ մասնակցությամբ դառնալու հաղթող:

«Մեկ անգամ չէ, որ մենք ականատես ենք եղել, թե ինչպես է մի երեխա մրցույթին մասնակցելուց հետո լուրջ հետաքրքրություն ցուցաբերել առարկայի նկատմամբ: Մեր մրցույթները ոչ միայն խթան են լավ սովորելու և բարդություններ հաղթահարելու հարցում, այլ նաև բացում են դուռը դեպի մաթեմատիկայի, հայոց ու ռուսաց լեզուների, քիմիայի, բնագիտական առարկաների, ինչպես նաև ժամանակակից տեխնոլոգիաների հետաքրքրաշարժ ու բացահայտումներով լի աշխարհը»,- ասում է «Այբ» կրթական հիմնադրամի մրցույթների բաժնի ղեկավար Շուշան Կարապետյանը և հավելում. «Մեր մրցույթներով մենք Հայաստան ենք բերում դպրոցական մրցույթների կազմակերպման միջազգային փորձը և, որ ավելի կարևոր է, մասնակից երեխաների համար հնարավորություն ենք ստեղծում դառնալու միջազգային կրթական համայնքի անդամ»:

Մենք ուրախությամբ ենք հետևում «Այբ» հիմնադրամի կողմից իրականացվող մրցույթների մասնակիցների հաջողություններին, տարեցտարի արձանագրում նրանց աճն ուսման մեջ և ոգևորությամբ ճանապարհում նրանց մեծ կյանք: Օրինակ՝ «Կենգուրուի» հաղթողներից Միքայել Մկրտչյանն այս տարի ընդունվեց Հարվարդի համալսարան: Իսկ Վանաձորի թիվ 20 դպրոցից Էրիկ Մելիքյանն այս տարի արդեն 3-րդ անգամ հաղթող է ճանաչվել: Նա և մրցույթի հաղթող ևս 2 աշակերտ՝ Նարեկն ու Հայկը, մեկնեցին Լեհաստանի Զակոպանե քաղաքում կազմակերպվող ճամբար և ոչ միայն նոր ընկերներ ձեռք բերեցին, այլև կարողացան արտասահմանցի իրենց հասակակիցների հետ համեմատել իրենց գիտելիքը, հարստացնել այն, ծանոթանալ տարբեր երկրների մշակույթին, ներկայացնել մերը և նոր ավյունով լեցուն վերադարձան հայրենիք՝ նոր բարձունքներ հաղթահարելու պատրաստակամությամբ: Մենք ոգևորվում ենք, երբ ամեն անգամ Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշարի ընթացքում լսում ենք գիտական լուրջ վերլուծություններով հագեցած ելույթներ, ինչպիսին էր այս տարվա հաղթողի՝ Երևանի «Օգանեսոն» թիմի հաղթական զեկույցը:

Մենք գիտակցում ենք, որ ապագան վստահելի ձեռքերում է, երբ տարրական դասարանների երեխաներն իրենց պատրաստած ռոբոտների միջոցով փորձում են կայուն զարգացման իրենց պատկերացումը փոխանցել: Ահա այսպես, «Այբ» դպրոցի «Կայզեն» թիմը հաղթահարեց ռոբոտաշինության ամենազանգվածային դպրոցական մրցույթներից մեկը՝ Ռոբոտների համաշխարհային օլիմպիադայի ազգային փուլը, որն անցկացվում էր «Ռոբոտներ՝ կայուն զարգացման համար» կարգախոսի ներքո: Մասնակիցներից պահանջվում էր ստեղծել այնպիսի ռոբոտ, որը տարածաշրջանը կդարձնի առավել կայուն՝ հետևյալ չորս ուղղություններով՝ մատչելի և մաքուր էներգիա, կայուն զարգացող քաղաքներ և համայնքներ, կլիմայական կայունացմանն ուղղված գործողություններ և կյանքը երկրի վրա՝ այդպիսով նպաստելով աշխարհն ավելի լավ վայրի վերածելու նպատակին: Դժվար է նկարագրել «Մեղու»-ի և «Կենգուրուի» հաղթողների, ինչպես նաև մարզերում ու տարիքային խմբերում լավագույն արդյունք արձանագրած մասնակիցների բերկրանքը՝ ՀՀ նախագահի նստավայր և Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Վեհարան այցելությունների ժամանակ: Քանի որ «Ռուսական արջուկն» օտար լեզվի մրցույթ է, բոլորիս շատ ոգևորում է այս մրցույթին նման զանգվածային մասնակցությունը: Ավելին՝ այս մրցույթին սկսել են միանալ նաև Հայաստանի գյուղական դպրոցների աշակերտները:

Մեր մրցույթները ճանապարհ են հարթում Հայաստանի և Արցախի աշակերտների համար դեպի գիտության նոր բարձունքներ, ինքնավստահություն հաղորդում նրանց և, գիտելիք տալուց բացի, սովորեցնում լինել մրցունակ:

Մրցույթները՝ թվերով

	ՀՀ	Արցախ	Ընդհանուր
Մասնակից դպրոցներ	939	85	1024
	900	91	991
	327	12	339
Մասնակից աշակերտներ	38228	2239	40467
	36149	2594	38473
	8720	355	9075
Մրցանակակիրներ	1667	106	1773
	1100	99	1199
	440	12	452
Լավագույն արդյունք արձանագրած աշակերտներ	1044	28	1072
	334	10	344
	153	1	154
Հաղթողներ	5	0	5
	1	0	1
	0	0	0

Կենգուրու

Մեղու

Ռուսական արջուկ

Դիլիջանի
կենտրոնական դպրոց

Դիլիջանի հիմնադիր համարվող Դավթյանների տոհմը մինչև 1831 թվականը բնակվում էր Իջևանին հարակից Սռի գյուղում: Իսկ դրանից առաջ Դավթյաններից Ստեփանը Ղարաբաղի մելիքների հետ բանակցություններ էր վարում Ռուսաց կայսեր հետ: Թեև տոհմի հիմնական զբաղմունքն անասնապահությունն ու հողագործությունն էր, նրանք բարձր էին գնահատում ուսման, գիտության և զինվորական գործի կարևորությունը, ուստի Դիլիջանում հաստատվելուց հետո դարձան կրթության տարածման և զինվորական գործի առաջամարտիկներ:

Այս մասին է գրել Դավթյանների ժառանգ Կարինեն «Իմ տոհմածառը» ընտանեկան դպրոցական նախագծի շրջանակում: Կարինեն սովորում է Դիլիջանի կենտրոնական դպրոցի 8-րդ դասարանում: Նա նախագծի 30 մասնակիցներից մեկն է, որ գործնական հետաքրքիր աշխատանքի միջոցով իր ինքնությանն ավելի է մոտեցել:

Էլինա Դանիելյան
8-րդ դասարան



Դիլիջանի կենտրոնական դպրոցը, որ այս տարի ճանապարհեց իր շրջանավարտների չորրորդ սերնդին, «Այբ» կրթական հիմնադրամի և ՀՀ Կենտրոնական բանկի համատեղ նախագիծն է: Այս համագործակցության շնորհիվ Դիլիջանում բնակվող երեխաները նոր մոտեցմամբ կրթության հնարավորություն են ստանում, իսկ քաղաքի համայնքը՝ կրթամշակութային նոր երանգներ:

2017-ին Դիլիջանի կենտրոնական դպրոցի 1-9-րդ դասարաններում սովորում էր **117 աշակերտ** (տարրական դպրոցում՝ 54, միջին դպրոցում՝ 63): Աշակերտները պարբերաբար մասնակցում են մշակութային միջոցառումների կամ կազմակերպում դրանք, մասնակցում մրցույթների և զբաղեցնում հաղթական հորիզոնականներ:



Նարեկ Դավթյան
7-րդ դասարան

Այս տարի առաջին անգամ դպրոցի 6 աշակերտ մասնակցեց Հայաստանում ԱՄՆ խաղաղության կորպուսի աջակցությամբ կազմակերպված անգլերենի գրավոր խոսքի ստեղծագործական մրցույթի դպրոցական փուլին: Մրցույթին ներկայացվեց **541 շարադրություն**, և մասնակցության առաջին իսկ տարում դպրոցի վեց աշակերտներից երեքը գրավեցին առաջին տեղը՝ 6-րդ, 8-րդ և 9-րդ դասարանների տարիքային խմբերում: Իսկ 8-րդ դասարանի աշակերտուհի Մանե Գրիգորյանը զբաղեցրեց երկրորդ տեղը Վանաձորում անցկացված անգլերեն պոեզիայի ասմունքի մրցույթի տարածքային փուլում՝ իր ասմունքով մեծ տպավորություն թողնելով թե հանդիսատեսի, թե ժյուրիի վրա:

«Գոշավանք» նախագիծի շրջանակում 6-9-րդ դասարանների աշակերտները ծանոթացան Իվանե Ա Զաքարյան իշխանի կառուցած միջնադարյան կրոնական, կրթական և մշակութային խոշոր կենտրոններից մեկի՝ Գոշավանքի ճարտարապետական կառուցվածքին և գործնական աշխատանքներ իրականացրին՝ կատարելով չափագրումներ, դրանց հիման վրա կազմելով նշումներ, որոշեցին մասշտաբը, փորձեցին գծագրել շինվածքի հատվածներ:

Իշխանական մեկ այլ տոհմի՝ Օրբելյանների մասին էլ զրուցեցին Ծաղկաձորի Օրբելիների տուն-թանգարանի հիմնադիրներ Մարինե Բունիաթյանը և Գերասիմ Մկրտչյանը, որ հյուրընկալվել էին Դիլիջանի կենտրոնական դպրոցում: Հանդիպումը շատ հետաքրքրել էր դպրոցի սաներին: Սակայն նրանք հատկապես տպավորվել էին Աբգար Օրբելու՝ իր որդուն՝ Ռուբենին ուղղված նամակից.

«Ճշմարտությունը, որը դու փնտրում ես, նյութական չէ, որը կարելի լինի բռնել, շոշափել: Ճշմարտությունն ինքնիրեն կծնվի քո գլխում միայն այն դեպքում, եթե երկար ժամանակ հանգիստ պրպտես, աշխատես, ուսումնասիրես հիմնավորապես այն առարկաները, որոնք դասավանդում են...»:

Աշակերտների բաշխվածությունն ըստ երկրների, մարզերի

Ընդհանուր թիվը՝ 117

- 54-ը՝ տարրական դպրոց
- 63-ը՝ միջին դպրոց

Դիլիջանից

- 73 աշակերտ

Երևանից

- 14 աշակերտ

  Ծնողները տեղափոխվել են Դիլիջան աշխատանքի

Իջևանից

- 2 աշակերտ

Վանաձորից

- 2 աշակերտ

ՌԴ-ից

- 3 աշակերտ

  Մեկ ընտանիք է, հատուկ տեղափոխվել է Դիլիջան, որպեսզի երեխաները սովորեն մեր դպրոցում:

ՀՀ ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի աշխատակիցների երեխաներ

- 23 աշակերտ

2017-ին արձանագրված հաղթանակները՝ օլիմպիադաներ, մրցույթներ

Մեղու

- 69 մասնակից,

  որոնցից 2-ը՝ լավագույն արդյունք

Ռուսական արջուկ

- 25 մասնակից,

  որոնցից 3-ը՝ հատուկ մրցանակ

Կենգուրու

- 77 մասնակից,

  որոնցից 7-ը՝ լավագույն արդյունք

Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշար

- 42 թիմ

  Մեր թիմը զբաղեցրել է 15-րդ տեղը:

Մաթեմատիկայի հանրապետական օլիմպիադա

- 2 աշակերտ,

  որոնցից 1-ը ստացել է 1-ին կարգի դիպլոմ:

Ռոբոտիկայի համաշխարհային օլիմպիադա

- 3 թիմ մեր դպրոցից,

  որոնցից 1-ը հաղթել է «Ռոբոտների լավագույն ինժեներական լուծում» անվանակարգում:

Write On! 2017 Creative Writing Competition

- **3 աշակերտ**

  3-ն էլ զբաղեցրել են 1-ին հորիզոնականը համապատասխան տարիքային խմբում:

The National Poetry Recitation Contest

- **2 մասնակից,**

  որոնցից 1-ը զբաղեցրել է 2-րդ հորիզոնականը:

Եվրոպայի ուժային եռամարտի առաջնություն

- **Ֆիզկուլտուրայի ուսուցիչը**

  110 կգ քաշային կարգում ձգում վարժությունից և եռամարտից գրավել է 1-ին տեղը:

foundation.ayb.am/hy/donate

Նվիրաբերի՛ր

Կրթությունն աստիճան է դեպի բարեկեցիկ ապագա:
Դարձե՛ք ապագայի ճարտարապետ:

Ֆինանսական արդյունքներ

«Այբ» կրթական հիմնադրամի դրամական հոսքերի՝ ըստ ծրագրերի

Դրամի ներհոսք 2017 թ.

հազար ՀՀ դրամ

«Այբ» ակումբի անդամավճարներ	**88.371**
Նվիրատվություններ կանոնադրական նպատակների համար	**2.076**
Նվիրաբերություն նոր և զարգացման ծրագրերի համար	**229**
Նպատակային դրամագլխի գծով ստացված եկամուտ	**3.575**
Նպատակային նվիրաբերություններ	**893.861**
«Այբ» կրթական հանգույց (ԱԿՀ) ծրագրի նվիրաբերություններ	2.661
«Այբ» դպրոցի կրթաթոշակներ	172.615
Սբ Թարգմանչաց եկեղեցի	195.744
Գ մասնաշենք. «Այբ» միջին դպրոց	364.099
Կրթաթոշակներ լավագույն բուհերի ուսանողներին	109.322
Ռոբոտների համաշխարհային օլիմպիադա	5.808
Նվիրաբերություններ CRM համակարգի համար	3.086
Ազգային երգ ու պարի ակադեմիայի ծրագրի համար նվիրաբերություններ	484
Էլեկտրոնային ռեսուրսների թարգմանության և ստեղծման նախագիծ	15.517
«Այբ» ակումբի աշխատանքների համակարգում	373
Նպատակային նվիրաբերություններ այլ ծրագրերի համար	24.153
Ծրագրային մուտքեր	**754.442**
«Կենգուրու» մրցույթ (մասնակցության վճարներ)	40.123
«Կենգուրու» մրցույթ (գրքերի վաճառք)	299
«Ռուսական արջուկ» մրցույթ (մասնակցության վճարներ)	9.228
Կրթության գերազանցության ազգային ծրագիր	666.337
«Մեղու» մրցույթ (մասնակցության վճարներ)	38.345
Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշար (մասնակցության վճարներ)	110
Ռոբոտների համաշխարհային օլիմպիադա	100
Ընթացիկ հաշիվների մնացորդների վրա հաշվեգրվող տոկոսներ	**1.262**
Երրորդ անձանց կողմից տրամադրվող միջոցներ	**151.118**
Այլ մուտքեր	**8.237**
Ընդամենը՝ ներհոսք	***1.903.271***

Ֆինանսական հոսքերի տեսանկյունից բոլոր ծրագրերով եղել է կայուն զարգացում:

Դրամի արտահոսք

հազար ՀՀ դրամ

Ադմինիստրատիվ և ընդհանուր ելքեր	**50.996**
Հիմնական միջոցների ձեռքբերում	1.944
Անձնակազմի ծախսեր (աշխատավարձ, հարկեր, պարտադիր սոց. վճարներ, անձնակազմի զարգացում, ուսուցում, կորպորատիվ միջոցառումներ և գործուղումներ, աշխատակիցների ներգրավման ծախսեր)	22.289
Գրասենյակային և ներկայացուցչական ծախսեր	6.095
Կապ	679
Տրանսպորտային ծախսեր	213
Մարկետինգ, հասարակայնության հետ կապեր և ֆոնդահայթայթում	10.858
Խորհրդատվական և սպասարկման ծառայություններ	8.256
Այլ ընդհանուր ծախսեր	661
Ծրագրային ելքեր	**1.550.560**
«Այբ» կրթական հանգույց (ԱԿՀ)	7.342
«Այբ» դպրոցի կրթաթոշակներ	163.672
«Այբ» դպրոցի հատուկ նախագծեր	1.437
Սբ Թարգմանչաց եկեղեցու ծրագիր	66
«Այբ» դպրոցի Գ մասնաշենք	388.225
«Կենգուրու» մրցույթ	36.277
«Ռուսական արջուկ» մրցույթ	9.197
Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշար	3.617
Կրթաթոշակներ լավագույն բուհերի ուսանողներին	84.713
«Այբ» ակումբի աշխատանքների համակարգում	9.517
«Մեղու» մրցույթ	25.017
Կրթության գերազանցության ազգային ծրագիր	796.231
Ռոբոտների համաշխարհային օլիմպիադա	5.597
Էլեկտրոնային ռեսուրսների թարգմանության և ստեղծման նախագիծ	11.305
Ազգային երգ ու պարի ակադեմիայի ծրագիր	511
Այլ ելքեր	7.836
Այլ նվիրատվություններ	**28.853**
Ընդամենը՝ արտահոսք	***1.630.410***

Ելքերի տեսանկյունից առաջատարն են եղել ԿԳԱԾ-ը, որի շրջանակում 2017 թ. եղել է առաջին փուլի ամփոփման տարի, և «Այբ» դպրոցի Գ մասնաշենքի ծրագիրը. ավարտվեցին հիմնական շինարարական աշխատանքները, և 2017 թ. վերջին եռամսյակում բացվեց նոր մասնաշենքը:

Դրամական ելքերի ծավալներ 2017

հազար ՀՀ դրամ

Կրթության գերազանցության ազգային ծրագիր	796.231
«Այբ» դպրոցի Գ մասնաշենք	388.225
«Այբ» դպրոցի կրթաթոշակներ	163.672
Կրթաթոշակներ լավագույն բուհերի ուսանողներին	84.713
«Կենգուրու» մրցույթ	36.277
«Մեղու» մրցույթ	25.017
Էլ. ռեսուրսների թարգմանության և ստեղծման նախագիծ	11.305
«Այբ» ակումբի աշխատանքների համակարգում	9.517
«Ռուսական արջուկ» մրցույթ	9.197
«Այբ» կրթական հանգույց (ԱԿՀ)	7.342
Ռոբոտների համաշխարհային օլիմպիադա	5.597
Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշար	3.617
«Այբ» դպրոցի հատուկ նախագծեր	1.437
Ազգային երգ ու պարի ակադեմիայի ծրագիր	511
Սբ Թարգմանչաց եկեղեցու ծրագիր	66
Այլ ելքեր	7.836

Ծրագրային ելքեր՝ 1.550.560	3.212.742
հազար ՀՀ դրամ	*մոտավորապես ԱՄՆ դոլար (հաշվարկված 2017 թ. ՀՀ ԿԲ միջին փոխարժեքի հիման վրա)*



foundation.ayb.am/hy/donate

Նվիրաբերի՛ր

Կրթությունը շարժում է մթությունից դեպի լույս:
Ալան Բլում

«Այբ» կրթական հիմնադրամի նախագծերն իրականացվում են Հայաստանի բոլոր մարզերում և Արցախում՝ տարեկան ներգրավելով ավելի քան 100000 երեխայի:

Դրամական ելքերի ծավալ՝ ըստ տարիների

2007-2017 թթ. հազար ՀՀ դրամ



2009 թ.
«Կենգուրու» մրցույթի մեկնարկ

2010-2011 թթ.
«Այբ կրթական հանգույց» ծրագրի մեկնարկ

2012-2013 թթ.
«Այբ» դպրոցի Ա և Բ մասնաշենքերի շինարարության ավարտ, Դիլիջանի կենտրոնական դպրոցի մեկնարկ

2014 թ.
ԿԳԱԾ-ի մեկնարկ, «Մեղու» մրցույթի մեկնարկ

2015 թ.
«Այբ» դպրոցի Գ մասնաշենքի շինարարության մեկնարկ

2017 թ.
«Այբ» ակումբի անդամավճարի ամեն 1 դրամի դիմաց «Այբ» հիմնադրամը ներգրավել է 18,7 դրամ:



2017 թ.
«Այբ» հիմնադրամի ամեն 1 դրամ վարչական ելքի դիմաց կատարվել է 30,4 դրամ ծրագրային ելք:



2017 թ.
Հանրային կապերի և ֆոնդահայթայթման մեջ ներդրված յուրաքանչյուր 1 դրամը բերել է 98,7 դրամ*՝ նվիրատվությունների և ծրագրային մուտքերի տեսքով:



** առանց «Այբ» ակումբի անդամավճարների*

«Այբ» կրթական հիմնադրամ և «Այբ» համակարգի դպրոցներ

Դրամական հոսքեր 2007-2017 թթ.* *հազար ՀՀ դրամ*



** «Այբ» կրթական հիմնադրամի կողմից «Այբ» դպրոցին տրվող կրթաթոշակները և այլ նվիրաբերություններն ու նվիրատվությունները ներառված են երկու կազմակերպությունների շրջանառության մեջ:*

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010,
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 566 762
Ֆաքս + 374 (10) 566 762
Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Այբ» կրթական հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք իրականացրել ենք «Այբ» կրթական հիմնադրամի («Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, Հիմնադրամի միջոցների մնացորդում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս ֆինանսական գործունեության արդյունքները և դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Նշված ստանդարտներով նախատեսված մեր պարտականությունները ներկայացված են մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի օրենսգրքի (ՀԷՄՍԽ օրենսգիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և մենք կատարել ենք էթիկային վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ օրենսգրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն, չմեղսակցական KPMG International Cooperative ("KPMG International") կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պետք է իրականացնի Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատում, բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությանը վերաբերող հարցերը և կիրառելով անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են վերահսկել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացը:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են սխալի կամ խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավաստիացման բարձր աստիճան է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ների համաձայն աուդիտի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել, որ, առանձին կամ միասին վերցված, ազդեցություն կունենան այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական թերահավատություն աուդիտի ընթացքում: Մենք նաև՝

- հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին անդրադարձող աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը ավելի մեծ է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել գաղտնի համաձայնություն, կեղծիք, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:

- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներում տեղին աուդիտորական ընացակարգեր մշակելու, բայց ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծքի արտահայտելու նպատակով:

- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և հարակից բացահայտումների հիմնավորվածությունը:

- կատարում ենք եզրահանգում ղեկավարության կողմից անընդհատության հիմունքով հաշվառում կիրառելու տեղին լինելու վերաբերյալ և, հիմք ընդունելով ձեռք բերված աուդիտորական ապացույցները, կատարում ենք հետևություն, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է լուրջ կասկածներ հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք

KPMG

«Այբ» կրթական հիմնադրամ
Անկախ աուդիտորական եզրակացություն
էջ 3

ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդ բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում՝ ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Հիմնադրամի կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:

– գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձությունները այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, աուդիտի ընթացքում առաջացած նշանակալից հարցերի, այդ թվում՝ աուդիտի ընթացքում հայտնաբերված ներքին վերահսկողության համակարգի էական թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացող աուդիտի իրականացման պատասխանատու գործընկերն է՝

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-էմ-Զի Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն

KPMG Armenia gsc

«Քեյ-Փի-էմ-Զի Արմենիա» ՓԲԸ
17 ապրիլի 2018թ.

foundation.ayb.am/hy/donate

Նվիրաբերի՛ր

«Այբ» համայնքի յուրաքանչյուր անդամ իր մեծ ներդրումն ունի մեր հաջողության և նվաճումների մեջ: Միացե՛ք և բազմապատկե՛ք մեր արդյունքները՝ դրանք դարձնելով նաև ձերը:

Տարին՝
ակնթարթում

Գ մասնաշենքի բացում

Ռոբոտների համաշխարհային օլիմպիադա 2017

«Կենգուրու» և «Մեղու» մրցույթների հաղթողները, մարզերում և տարիքային խմբերում ամենաբարձր արդյունք արձանագրած երեխաները՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Վերջին զանգն «Այբ» դպրոցում

Գ մասնաշենքի բացում

Վերջին զանգն «Այբ» դպրոցում

«Մեղու»

«Կենգուրու»

«Ռուսական արջուկ»

Զանգվածային դպրոցական մրցույթների մրցանակաբաշխություններ Հայաստանում և Արցախում

Ռոբոտների համաշխարհային օլիմպիադա 2017

Ավարտական հանդիսությունն «Այբ» դպրոցում



«Տարվա շրջանավարտ» տիտղոսակիրները

Գ մասնաշենքի գրադարան

Գ մասնաշենք

Մասնակցություն «Կրթություն և կարիերա» էքսպոյին

Ազգային երգ ու պար



Ազգային երգ ու պարի դաս

Մասնակցություն «Կրթություն և կարիերա» էքսպոյին

ԱԲ-ի ավարտական և բուհական ընդունելության քննություններ

Արարատյան բակալավրիատի դպրոցների ցանցի ստեղծման մեկնարկն ազդարարող հանդիսավոր միջոցառում

ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագիր. Ներածական հանդիպումներ

«Այբ»-ի մենտորության ծրագրի հանդիսավոր արարողություն

«Այբ»-ի
բարերարներ

«Այբ» կրթական հիմնադրամի բոլոր նախագծերում 2017 թվականին ֆինանսական հոսքերի տեսանկյունից արձանագրվել է կայուն զարգացում:

Տարվա ծախսային խոշորագույն հատվածը բաժին է ընկել ԿԳԱԾ-ին: 2017 թ. եղել է այս ծրագրի առաջին փուլի ամփոփման տարի: Մյուս խոշոր նախագիծը «Այբ» դպրոցի Գ մասնաշենքի կառուցումն է: Այս տարվա ընթացքում ավարտվեցին շինարարական հիմնական աշխատանքները, և բացվեց նոր մասնաշենքը:

Ֆոնդահայթայթման և հանրային կապերի մասով հիմնական շեշտը դրվել է ծախսերի առավելագույն արդյունավետության ապահովման վրա: Միևնույն ժամանակ վարչական ծախսերի մասով կատարվել է օպտիմալացում, ինչը թույլ է տվել ավելի մեծ ծավալի ներդրում կատարել բուն ծրագրերի մեջ:

Ֆինանսական արդյունքների տարեկան ֆինանսական աուդիտն իրականացվել է «KPMG Հայաստան» ընկերության կողմից: Կազմակերպությունը հաստատել է արդյունքների ճշգրիտությունն ու արժանահավատությունը: Աուդիտորների եզրակացությունը 2017 թ. ֆինանսական արդյունքների մասով առանց վերապահումների է և հրապարակված է 27/04/2018 թ. www.azdarar.am կայքում համաձայն ՀՀ օրենսդրության պահանջի:

Դրվագ Գ մասնաշենքի բացումից

«ԱՅԲ» հիմնադրամի աջակիցները

«Այբ» դպրոցի «միջուկ-դրամագլխի» բարերարներ

Աշոտ Ալանյան և Ալիսա Մնացականյան
Աշոտ Թումասյան
Աշոտ Մկրտչյան
Արամ Փախչանյան և Յուլիա Դանիելյան
Արթուր Ալավերդյան
Արմեն Մելքումյան
Արմեն Շահինյան
Արսեն Աղաջանյան | «Դար» հիմնադրամ
Արտեմ Կոնստանդյան
Դավիթ և Այրոնա Յաններ
Դավիթ Փախչանյան
Կարեն և Մարինե Մուսայելյաններ
Կարո Սարգսյան
Ղարիբ Մովսիսյան
Ռուբեն Հարությունյան և Անահիտ Անտոնյան
Սարգիս Բաղալյան
Սերգեյ Համբարձումյան
Վարդան Բաբիկյան

«Այբ» դպրոցի մասի հովանավորներ

Ալեքսանդր Մուրադյան
Աշոտ և Մարինա Դանիելյաններ
Ավետիք Չալաբյան և Անահիտ Ադամյան
Արտաշես և Նատալյա Շիրիկյաններ
Գոռ Նահապետյան
Գրիգոր Մելքոնյան
Դավիթ և Աննա Պաղտասարյան Թրաստ
Էմիլ Արզանգուլյան
Լևոն Համդիլյան
Լևոն և Կլաուդիա Նազարյաններ
Կարեն և Ռուզաննա Գրիգորյաններ
Գարո Արմեն
Կոնստանտին, Գևորգ և Սերգեյ Թևոսովներ
Մարտիրոս Մինասյան
Պրոֆ. Յան Շի և Սիլվա Յան
Ռալֆ և Արմիկ Յիրիկյաններ
Սարգիս Բաղալյան և Մարինա Դալլաքյան
Վարդան Բաբիկյան
Տիգրան Հարությունյան
Ռաֆֆի և Նինա Ֆըսթըգճյաններ
«Ucom» ընկերություն
«Այբ» համայնք
«Ապավեն» ՍՊԸ
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
«Արցախբանկ» ՓԲԸ
«Զիգզագ» ՍՊԸ
«Լույս» հիմնադրամ
«Պրոմեթեյ բանկ» ՓԲԸ
«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ
Հայաստանի բանկերի միություն
Հայկական բարեգործական ընդհանուր միություն
ՀԲԸՄ Շվեյցարիայի մասնաճյուղ
Մելգոնյան կրթական հաստատության ընկերներ

Նվիրատուներ

«Այբ» դպրոցի բարերարներ

Ալեքսանդր Մուրադյան
Ալեքսանդր Պանկով
Ալֆրեդ Եսայան
Ահարոն Մելքոնյան
Աղասի Դարբինյան
Աշոտ Ալանյան և Ալիսա Մնացականյան
Աշոտ Մկրտչյան
Ասպետ և Ամիդա Փոգարյան
Ավետիք Չալաբյան և Անահիտ Ադամյան
Արա Հոմերի Աբրահամյան և Քրիստինե Ալմազյան
Արամ Արամյան
Արամ Կայֆաջյան
Արամ Մնացականյան
Արեգ Զաքոյան
Արթուր Ամրոյան
Արթուր Արզումանով
Արթուր Չիպկինյան և Սոնա Կոշեցյան
Արթուր Ջանիբեկյան
Արթուր Ջավադյան
Արթուր Վանեցյան
Արթուր Օսիկյան
Արմեն Խաչատրյան
Արսեն Աղաջանյան | «Դար» հիմնադրամ
Արսեն Գալստյան
Արսեն Թառոյան
Արսեն Ղազարյան | «Ապավեն» ՍՊԸ
Արտակ Գյուրջինյան
Արտակ Հովհաննիսյան
Արտաշես և Նատալյա Շիրիկյաններ
Արտավազդ Սոխիկյան
Բենո և Արսինե Շիրվանյան
Գագիկ Զաքարյան
Գագիկ Սահակյան
Գարիկ Մարտիրոսյան
Գեղամ Վարդանյան և Նելլի Սեմերջյան
Գևորգ և Արևիկ Գիզիրյաններ
Գրեգ Շիրակյան
Գրիգոր Մելքոնյան
Գրիգորի Արսենյան
Դավիթ և Այրոնա Յաններ
Դավիթ Փախչանյան
Էդգար Գալստյան
Էդուարդ և Նենսի Գյուլեսերյաններ
Էմիլ Արզանգուլյան
Էրիկ Մկրտչյան
Թամար Հաջյան | Դավիթ և Աննա Պաղտասարյան Թրաստ
Իշխան Մխիթարյան
Լևոն Խալաթյան
Լուիս Սիմոն Մանուկյան
Խորեն Ոսկանյան
Կարեն Ավագումյան
Կարեն Մովսիսյան
Կարո Սարգսյան
Կարոլինա Շիրոյան
Կոնստանտին, Գևորգ և Սերգեյ Թևոսովներ
Հակոբ և Սեդա Գևրեկյաններ
Հովհաննես Գրիգորյան
Հովսեփ Ներսիսյան
Հրայր և Զարուհ Կաբակյաններ
Մանուկ Հերգնյան
Մանվել Ուրումյան
Մարտիրոս Մինասյան
Մեսրոպ քհն. Արամյան
Միխայիլ Ուրյասով
Միսակ Զաքարյան
Նաիրա Մանուկյան
Նիկոլայ Սմիռնով
Նորայր Գյուզալյան
Նուբար և Աննա Աֆեյաններ
Շահեն Ծառուկյան
Պրոֆ. Յան Շի և Սիլվա Յան
Ջեյմս և Փրիսիլա Ալթունյաններ
Ռուբեն Գևորգյան
Ռուբեն Հարությունյան և Անահիտ Անտոնյան
Սամվել Դովլաթյան
Սամվել Սամվելյան
Սարգիս Բաղալյան և Մարինա Դալլաքյան
Սարգիս Թարվերդյան
Սարգիս Նուրյան | Հայ ոսկերչական միջազգային միություն
Սերգեյ Խաչատրյան
Սերգեյ Յուշին և Օլգա Ժուրավսկայա

Սևան և Քլարիս Կաբակյաններ
Սինան Սինանյան
Վազգեն Գևորգյան
Վահան Աբգարյան
Վահե Կուզոյան
Վարդան Բաբիկյան
Վարդան և Կարինե Բալայաններ
Վարդան Մելիքյան
Վարուժան Մուրադյան
Վիկտոր Ծառուկյան և Հուդիթ Սարյան
Տաթևիկ Խալափյան
Տիգրան Հարությունյան
Տիգրան Մինասյան
Ռաֆֆի Դուդակլյան
Քնար Բաբայան | Վիգեն Բաբայան բարեգործական հիմնադրամ
Օնիկ Ազնաուրյան
5165 ակումբ
«ABBYY» ընկերություն
«Granatus Ventures» ընկերություն
«Այբ»-ի բարերարների համայնք
«Այբ»-ի ծնողների համայնք
«Զիգզագ» ՍՊԸ
«Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ
«Լույս» հիմնադրամ
«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ
Մեսրոպ քհն. Հովսեպյան

Սրբոց Թարգմանչաց եկեղեցու բարերարներ

Աշոտ Ասլանյան և Ալիսա Մնացականյան
Աշոտ Մկրտչյան
Արա Մկրտչյան
Արամ Երիցյան
Արեգ Զաքոյան
Արթուր Դերոյան
Արթուր Ջանիբեկյան
Արմեն Կազարով
Արտակ Հովհաննիսյան
Դավիթ Փախչանյան
Լևոն Մազմանյան
Կարո Սարգսյան
Հովհաննես Ջիվանյան
Մուշեղ Մամիկոնյան
Ռուբեն Հարությունյան և Անահիտ Անտոնյան
Սամվել Սամվելյան
Սարգիս Բադալյան և Մարինա Դալլաքյան
Սերգեյ Համբարձումյան
Քերոբ Միքայելյան

Կրթաթոշակային ֆոնդի նվիրատուներ

Ալբերտ Եգանյան
Ալեքսանդր Մուրադյան
Ալֆրեդ Եսայան
Անահիտ Ամատունի
Աշոտ Ասլանյան և Ալիսա Մնացականյան
Աշոտ և Մարինա Դանիելյաններ
Աշոտ Թումասյան
Աշոտ Մկրտչյան
Ավետիք Չալաբյան և Անահիտ Ադամյան
Ավետիք Քերոբյան
Արա Հոմերի Աբրահամյան և Քրիստինե Ալմազյան
Արամ Արամյան
Արամ Երիցյան
Արթուր Բերդ
Արթուր Դերոյան
Արթուր Ջանիբեկյան
Արթուր Ջավադյան
Արմեն Արսենյան
Արմեն Շահինյան
Արմեն Ուզունյան
Արսեն Աղաջանյան | «Դար» հիմնադրամ
Արսեն Ղազարյան
Արտակ Հովհաննիսյան
Արտաշես և Նատալյա Շիրիկյաններ
Արտեմ Կոնստանդյան
Արտյոմ Գրիգորյան
Գայանե Արամյան
Գարեգին Թոսունյան
Գարիկ Մարտիրոսյան
Գևորգ Սարգսյան
Գոռ Նահապետյան
Գորան Բրեգովիչ
Գրիգորի Դարչիև
Դավիթ Դավիդյանց
Դավիթ և Այոնա Յաններ
Դավիթ Փախչանյան
Դմիտրի Զույկով
Էմիլ Արզանգուլյան
Իգոր Խալաթյան
Իրմա Վարդանյան
Լևոն Գրիգորյան
Լևոն Ղազարյան
Լևոն Մազմանյան
Կարեն և Լիլիաննա Մխիթարյաններ
Կարեն և Մարինե Մուսայելյաններ
Կարեն և Ռուզաննա Գրիգորյաններ
Գարո Արմեն
Կարո Սարգսյան
Կարոլին Մուգար
Կոնստանտին, Գևորգ և Սերգեյ Թևոսովներ
Կորյուն Մկրտչյան
Հակոբ Մոմջյան
Հայկ Ալեքսանյան
Հայկ Սարգսյան
Հայկ, Կարո և Արաքսի Թումաջանյաններ
Հովնան Էալայան
Ղարիբ Մովսիսյան
Մարլեն Մանասով
Մարտիրոս Մինասյան
Մերուժան Սարգսյան
Միխայիլ Տիխոնով
Մուշեղ Մամիկոնյան
Յուլիա Դանիելյան
Նազարեթ և Նիլա Ֆըսթըզճյաններ
Նորայր Գյուզալյան
Շահեն Ծառուկյան
Պարգև Վիրաբյան
Պրոֆ. Յան Շի և Սիլվա Յան
Ջեյմս Թուֆենկյան
Ռալֆ և Արմիկ Յիրիկյաններ
Ռուբեն Գևորգյան
Ռուբեն Հարությունյան և Անահիտ Անտոնյան
Ռուբեն Ջաղինյան
Սարգիս Բադալյան և Մարինա Դալլաքյան
Սերգեյ Խաչատրյան
Սերգեյ Յուշին և Օլգա Ժուրավսկայա
Վազգեն և Սոսի Սեդրակյաններ
Վահան Աբգարյան
Վահե Մելքոնյան
Վարդան Բաբիկյան
Վիկտոր Ակուլյան
Տիգրան Ուզունյան

«Աերոսիբ» ընկերություն
«Ազատ» հիմնադրամ
«Բիբլոս բանկ Արմենիա» ՓԲԸ
«Զիգզագ» ՍՊԸ
«Կոսմոտեկա» ընկերություն
«Պողոսյան» հիմնադրամ
«Պրոմեթեյ բանկ» ՓԲԸ
«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ

Նվիրատուներ լավագույն բուհերի ուսանողների կրթաթոշակների համար

Ադամ Կաբլանյան
Ալֆրեդ Եսայան
Անուշ Առուստամյան
Աշոտ Ասլանյան և Ալիսա Մնացականյան
Աշոտ Թումասյան
Ավետիք Չալաբյան և Անահիտ Ադամյան
Արամ Փախչանյան և Յուլիա Դանիելյան
Արթուր Բերդ
Արթուր Մադաթյան
Արմեն Խաչատրյան
Արմեն Կազարով
Արմեն Միքայելյան
Արմեն Շահինյան
Արմեն Փանոսյան
Արսեն Աղաջանյան
Արտակ Հովհաննիսյան
Արտաշես և Նատալյա Շիրիկյաններ
Գարի Մեքիկյան
Գրիգորի Մազմանյանց
Դավիթ և Այոնա Յաններ
Դավիթ Փախչանյան
Լևոն Ղազարյան
Լևոն Ֆրնջիբաշյան
Կարեն և Մարինե Մուսայելյաններ
Կարեն Չալտիկյան
Գարո Արմեն
Կարո Սարգսյան
Հարութ Աջարյան
Հրայր Նալբանդյան
Մանուկ Հերգնյան
Մեսրոպ քհն. Արամյան
Նարեկ Թովմասյան
Շանթ Հովնանյան
Պաոլո Փիրջանյան
Ռոն Պապաս
Ռուբեն Սիմոնյան
Սերգեյ Համբարձումյան
Սերգեյ Ստեփանյանց
Սյուզի Հաբեշյան
Վարուժ Բեդիկյան

«Այբ» դպրոցի ոչ ֆինանսական նվիրատուներ

«EPAM Systems» ընկերություն
«Twiga Communication Group» ընկերություն
Արմենակ Խաչատրյան և Մարինա Վարդանյան | Բաղրամյանի թռչնաֆաբրիկա
Արտակ Չիբուխչյան
Արտաշես և Նատալյա Շիրիկյաններ
Լևոն Աֆեյան | «Առոռ Սեյլս» ՍՊԸ
Խորեն Քոթանջյան | «Թերմորոս-Ար» ՍՊԸ
ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր, Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ
ՎիվաՍել-ՄՏՍ ընկերություն
«Jur Jur» ՍՊԸ
«Հայաստան ծառատունկ» ծրագիր
«Փայլ» ընկերություն
Արա Պետրոսյան | «Ար և Ար Դիզայն Քնստրաքշն» ՍՊԸ
Երևանի քաղաքապետարան

Ֆաբլաբի բարերարներ

ՎիվաՍել-ՄՏՍ ընկերություն
ՀՀ Կենտրոնական բանկ

«Այբ» դպրոցի նպատակային դրամագլխի բարերարներ

Սիրուն Գյուրեղյան Թրաստ

Գիտության և տեխնոլոգիայի կենտրոնի բարերարներ

Արմեն Մելքումյան

«ԱյբԼաբ» ծրագրի նվիրատուներ

Արթուր Բերդ
Դավիթ Փախչանյան
Կարո Սարգսյան

Կանոնադրական նպատակների և այլ ծրագրերի նվիրատուներ

Աշոտ Ասլանյան
Արթուր Բերդ
Արմեն Խաչատրյան
Արմինե Առուստամյան
Արսեն Աղաջանյան
Արսեն Ղազարյան
Դավիթ Փախչանյան
Դավիթ և Այոնա Յաններ
Թալին Ավագյան
Մարտիրոս Մինասյան
Ռուբեն Հարությունյան
Սահակ Պետրոսյան | «Goldman Sachs Asset» ընկերություն
Վարդան Սիրմաքեշ | «Դար» հիմնադրամ
«Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամ

Դպրոցական մրցույթների նվիրատուներ

Bzzz Armenian Honey ընկերություն
Արամ Փախչանյան
ՀՀ-ում ՌԴ դեսպանությանն առընթեր «Ռոսսոտրուդնիչեստվո»-ի ներկայացուցչություն
«Creative Educational Technologies» ընկերություն
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ

Երևան, 2018